2006, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (222)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Կատարվեց Ս. Վարդան եկեղեցու եւ Ս. Հովհաննես Մկրտիչ մատրան հիմնարկեքը





Մայիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հավարտ Սուրբ Պատարագի, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մայր տաճարի հյուսիսային կողմում կառուցվող նոր մկրտարանի՝ Ս. Վարդան եկեղեցու եւ սուրբ Հովհաննես Մկրտիչ մատրան հիմնարկեքը: Մայր Աթոռի նոր մատուռ-մկրտարանը կառուցվում է ՀՀ նախկին վարչապետ Արմեն Սարգսյանի եւ նրա ընտանիքի ազնիվ բարերարությամբ: Շենքը նախագծել է վաստակաշատ ճարտարապետ Ջիմ Թորոսյանը:

*«Այսօր մենք Ձեզ հետ միասին կատարեցինք հիմերի օրհնության արարողությունը Ս. Վարդան եկեղեցու եւ Ս. Հովհաննես Մկրտիչ մատրան, որոնք պիտի դառնան Մայրավանքի մկրտության սրբազան կառույցները: Այստեղ պիտի գան հայորդիք վերածնվելու հոգեւոր ավազանից մեր Ս. Եկեղեցու, պիտի գան դրոշմվելու սրբալույս մյուռոնով եւ դառնալու Քրիստոսի Եկեղեցու եւ ժողովրդի նախանձախնդիր զավակներ:*

*...Մենք գոհության փառք ենք առ Աստված բարձրացնում նաեւ, որ Տերը պարգեւում է մեզ բարերար զավակներ, ովքեր իրենց արդար քրտինքի վաստակը բերում են շաղախելու հայոց հողին՝ զորացնելու մեր Եկեղեցին եւ պայծառացնելու հայորդիների հավատքը»*,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը մկրտարանի կառուցման առիթով:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաեւ բարերար Սարգսյան ընտանիքին, որի անդամները ներկա էին հիմնարկեքի արարողությանը: Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ուղղեց նաեւ մկրտարանի ճարտարապետ Ջիմ Թորոսյանին, ինչպես նաեւ «Հորիզոն 95» շինարարական կազմակերպությանը:

Նոր մկրտարանի կառուցումը նախատեսվում է ավարտել մեկ տարում:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առիթով

*Սիրելի ժողովուրդ հայոց,*

*Հայրապետական սիրով Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս, եւ շնորհավորում Հանրապետության տոնի առիթով:*

*1918 թվականին մայիսյան փառապանծ հերոսամարտերի հաղթանակով հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ որպես իրականացում մեր ժողովրդի ազատության ու անկախության դարավոր իղձերի:*

*Քաջարի պայքարով, աներկբա հավատով ու միասնական ընթացքով վերահաստատած իր անկախ պետականությունը՝ ազգս հայոց ջանում է ստեղծագործ կյանքով եւ նոր իրագործումներով շենացնել այսօր երկիր Հայրենին:*

*Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ խաղաղության շնորհի համայն աշխարհին եւ պարգեւի եռանդ ու զորություն աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ հայրենանվիրումով ու եկեղեցասիրությամբ ուժերը ներդնելու համուն ազգային մեր իղձերի, մեր ժողովրդի միացյալ կյանքի ու պայծառ գալիքի:*

*Օրհնությամբ՝*

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## Մայր Աթոռ Սբ Էջմիածին ժամանեց Ֆինլանդիայի Ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը



Մայիսի 25-ին՝ Համբարձման տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Հայաստան ժամանեց Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեո Մակկոնենի գլխավորած պատվիրակությունը:

Օդանավակայանում պատվիրակությանը դիմավորեցին Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը, Տ. Ղուկաս արդ. Զաքարյանը:

Նույն օրը Վեհարանի հարկի ներքո Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունենեց պատվիրակությանը, որից հետո թափորի ուղեկցությամբ Ամենայն Հայոց Հայրապետը եւ Լեո արքեպիսկոպոսն ուղղվեցին դեպի Մայր տաճար, ուր Իջման Սուրբ Սեղանի մոտ աղոթք կատարվեց, ապա տեղի ունեցավ բարիգալստյան պաշտոնական արարողությունը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անունից Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետին ողջունեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը՝ ներկայացնելով Մայր Աթոռի՝ Միածնի էջքով հիմնադրման պատմությունը, հայ ժողովրդի կյանքում նրա բացառիկ առաքելությունը, նկատելով նաեւ, որ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետի այցը Մայր Աթոռ համընկավ Տիրոջ Համբարձման տոնախմբմանը եւ Հայոց Հայրապետական Աթոռի՝ 1441 թ. Սսից փոխադրման եւ Սուրբ Էջմիածնում վերահաստատման հիշատակի օրվան:

Նորին Սրբությանն ու ներկաներին իր խոսքն ուղղեց նաեւ Լեո արքեպիսկոպոսը: *«...Առանձնահատուկ երախտիքի եւ ցնծության զգացումներով եմ այցելում այս երկիրը, որն առաջինը աշխարհում ընդունեց քրիստոնեությունը որպես ազգային կրոն, մի երկիր, որտեղ առաքելական հաջորդականությունը պարզապես եկեղեցու դավանաբանության եւ քահանայության հարց չէ, այլ ուղղակիորեն առնչվում է Եկեղեցու հիմնադիր առաքյալներից երկուսին:*

*1700 տարիներ ի վեր առաքելական ուղղափառ հավատքը անբաժանելի մասն է եղել ձեր ժողովրդի կյանքի եւ յուրահատուկ մշակույթի, իսկ քրիստոնեությունն ու Սուրբ Եկեղեցին եղել են կապ, հույսի աղբյուր եւ զորություն բոլոր հայերի համար՝ անկախ նրանից, թե ապրում են նրանք այս երկրում, թե արտասահմանում... Դուք անսասանորեն գոյատեւել եք եւ պահպանել ձեր հավատքը ի հեճուկս հարեւան ժողովուրդների ճնշումների եւ անաստվածության լծի: Միայն սրանով էլ ձեր Եկեղեցին կարող է հիանալի օրինակ հանդիսանալ ամբողջ քրիստոնյա աշխարհի համար»*,- ասաց Լեո արքեպիսկոպոսը:



Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոսը վերհիշեց նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա 2004 թվականի հունիսին, որն առաջին քայլը դարձավ երկու Եկեղեցիների միջեւ հարաբերությունների հաստատման համար:

Ապա Լեո արքեպիսկոպոսին եւ իր ուղեկից անձանց բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետը.

*Շարունակությունը՝ էջ 2*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Մայր Աթոռ Սբ Էջմիածին ժամանեց Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը





*Սկիզբը՝ էջ 1*

*«...Մենք փառք եւ գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ այս առիթն է ընձեռել կանգնել այս պահին նվիրական մեր հավատքի կենտրոնի՝ սուրբ Էջմիածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ եւ միասին աղոթք առաքել առ Աստված մեր ժողովուրդների ապահով ու բարօր կյանքի եւ աշխարհի խաղաղության համար, ժողովուրդների եղբայրության եւ պետությունների համագործակցության համար: ...Բազում Եկեղեցիների հոգեւոր պետեր դարերի ընթացքում այս Սուրբ Սեղանի առջեւ իրենց աղոթքն են առ Աստված բարձրացրել:*

*Մենք հավատում ենք, որ համատեղ մեր աղոթքները գալիս են առավել զորացնելու եղբայրությունը ազգերի, եղբայրական սերը երկու Եկեղեցիների՝ մերձեցնելով նրանց իրենց առաքելության մեջ, որ ունեցնված է մեր Երկնավոր Տիրոջ կողմից:*

*Խորհրդանշական է Ձեր ներկայությունը այսօր Մայր տաճարում, որը Տիրոջ երկրավոր կյանքից երկու հազար տարիներ հետո գալիս է վկայելու, որ Քրիստոսի սուրբ Եկեղեցու հետեւորդները՝ շարունակում են հավատարիմ մնալ Տիրոջ նվիրական սիրո պատգամին: Եվ մենք այս պահին աղոթք ենք երկինք բարձրացնում, որ այս սերը լինի անսասան մեր Եկեղեցիների մեջ, Քրիստոսի Սուրբ Եկեղեցու մեջ, այդ սերը առաջնորդի մեզ մեր ծառայության մեջ»:* Արարողությունից հետո Ամենայն Հայոց Հովվապետը եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետը մասնակցեցին Սուրբ Պատարագի:

Պատարագի սրբազան արարողության ավարտին Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոսն այցելեց նաեւ Մայր Աթոռի թանգարաններ:

Նույն օրը Գարեգին Բ Հայոց Հայրապետը եւ Լեռ արքեպիսկոպոսն այցելեցին Սուրբ Գեղարդի վանք:

Հաջորդ օրը՝ մայիսի 26-ին՝ առավոտյան, Հայոց Հայրապետն ու Լեռ արքեպիսկոպոսը պատվիրակության հետ միասին եղան Ծիծեռնակաբերդում, ապա հանդիպեցին հանրապետության նախագահի հետ, այցելեցին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի եւ հայորդյաց տներ: Մայիսի 27-ին այցելեցին Մատենադարան, Խորվիրապ, եղան Սեւանի Վազգենյան դպրանոցում: Կիրակի՝ մայիսի 28-ին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում մասնակցեցին Սբ Պատարագին, ապա այցելեցին Սարդարապատ: Երկուշաբթի Կարելիայի եւ Համայն Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը մեկնեց մեր հանրապետությունից:

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ֆրանսահայ ուխտավորների

Մայիսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ֆրանսահայ մի խումբ ուխտավորների՝ մեր Եկեղեցու բարերար Սարգիս Պետոյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ողջունեց ուխտավորների այցը հայրենիք եւ համայն հայ ժողովրդի համար նվիրական հոգեւոր կենտրոն: Վեհափառ Հայրապետը ուխտավորներին ներկայացրեց Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերները եւ ներկայիս գործունեությունը՝ եկեղեցականների պատրաստության, ժողովրդի քրիստոնեական դաստիարակության, եկեղեցաշինության եւ սոցիալական ծառայության ոլորտներում:

Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ իր գնահատանքն ու օրհնությունը բերեց տիար Սարգիս Պետոյանին՝ եկեղեցասեր գործունեության համար: Տիար Ալեն Մանուկյանի եւ Սարգիս Պետոյանի ազնիվ բարերարությամբ Սեւան քաղաքում կկառուցվի առաջին եկեղեցին:

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ «ՆՈՐԱՇԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ



Մայիսի 25-ին Թբիլիսիում «Դավթյանների տիկնիկային թատրոնում» կայացավ Վիրահայոց թեմի Մշակութային հանձնախմբի եւ թեմի նախաձեռնությամբ լույս ընծայվող «Նորաշեն» հոգեւոր, մշակութային, լրատվական հայ-ռուսերեն ամսագրի շնորհանդեսը: Ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի տնտեսական եւ ենթակառույցների զարգացման փոխնախարար, ՎՀՄ նախագահ Հենրիխ Մուրադյանը, այստեղ էին նաեւ վիրահայ մտավորականներ, ներկայացուցիչներ Թբիլիսիի պետական հայկական դրամատիկական թատրոնից, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունից, Թբիլիսիի հայոց դպրոցներից եւ վիրահայ հասարակական կազմակերպություններից:

Սրբազան հայրը ողջունեց եւ օրհնության իր խոսքը բերեց ներկաներին, ապա խոսեց վիրահայ այս բնագավառում կատարվելիք բարեփոխումներից:

Ելույթներին հաջորդեց Մշակութային հանձնախմբի անդամ տիկին Ժաննայի եւ նրա ընտանիքի կողմից ցուցադրվող տիկնիկային ներկայացումը:

Միջոցառման երկրորդ մասը նշանավորվեց «Նորաշեն»-ի շնորհանդեսով: Սրբազան հայրը պատգամեց պատասխանատու լինել ստանձնած առաքելության մեջ եւ խաղաղ ու արգասաբեր ընթացք մաղթեց ամսագրին: Ընթերցվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի «Նորաշենի»-ին հղված օրհնության գիրը:

Միջոցառումն անցավ ջերմ մթնոլորտում, ավանդական հյուրասիրությամբ:

Նշենք, որ «Նորաշեն»-ն իր բնույթով անդրանիկն է թեմի տասնիինգ դարերի պատմության մեջ եւ լույս է ընծայվում երկու ամիսը մեկ հաճախականությամբ: Ամսագրի հովանավորներն են Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու կնքահայր Բլագոնրավովլ ընտանիքը եւ ԱՄՆ Արեւմտյան թեմի Հարավային Կալիֆոռնիայի «Անապատի» Հայ Առաքելական Եկեղեցիները (հոգեւոր հովիվ Տ. Ստեփանոս քահանա Դինգիլյան):

*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*




## ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՍԻԱՆԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 28-ին Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցում, հանդիսապետությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս Մկրտչյանի, Սուրբ Պատարագ մատուցեց Սիսիանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Հովհաննիսյանը: Հընթացս Պատարագի, ձեռամբ սրբազան հոր, սարկավագական ձեռնադրություն ստացավ Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու դպիր Հովնան Վարդանյանը:

Սրբազան հայրն իր հայրական օրհնությունն ու հորդորը տվեց նորընծա սարկավագին. *«...Շուրջ 200 տարի է, ինչ Սիսիանի Սուրբ Հովհաննես եկեղեցում ձեռնադրություն չի կատարվել, ուստի մեծ խորհուրդ ունի այսօրինակ ձեռնադրությունը. իր քաղաքում, իր եկեղեցում եւ իր ժողովրդին ծառայելու համար մեր՝ հոգեւորականներիս շարքերը համալրելու կոչվեց մի սարկավագ եւս»*: Սրբազան հայրն ուրախությամբ նշեց, որ շատ սյունեցիներ ուսանում են հոգեւոր կրթօջախներում, ու շատերն էլ արդեն ստանձնել են հոգեւոր ծառայություն ինչպես արտասահմանյան թեմերում, այնպես էլ Սյունյաց թեմում:

*Սյունյաց փոխառաջնորդության մամլո դիվան*



## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ 2006-2007 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Երուսաղեմի հայոց ժառանգավորաց վարժարան կարող են ընդունվել միջնակարգ կրթությամբ 15-16 տարեկան այն պատանիները, որոնք հաջողությամբ կհանձնեն ընդունելության քննությունները հետեւյալ առարկաներից.

ա) հայոց լեզու (թելադրություն).
բ) մաթեմատիկա (6-րդ դասարանի ծրագրով).
գ) հայ ժողովրդի պատմություն (հարցազրույց).
դ) քրիստոնեական (հավատքի վերաբերյալ հարցազրույց).
ե) երաժշտություն (ձայնային տվյալների ստուգում):

Դիմումները տրվելու են Երուսաղեմի Սբ Հակոբյանց ժառանգավորաց վարժարանի հասցեով՝ ներկայացնելով ներքոհիշյալ փաստաթղթերը.

ա) դիմում-հայտ (որում պետք է նշվի հոգեւորական դառնալու ցանկություն).
բ) ինքնակենսագրություն.
գ) միջնակարգ կրթության վկայական (ութամյա, իննամյա, տասնամյա).
դ) երկու լուսանկար (3x4 չափի).
ե) մկրտության վկայական.
զ) բնութագիր թեմի առաջնորդից կամ շրջանի քահանայից.
է) ծնողների համաձայնագիրը.
ը) տեղեկանք առողջության մասին (086 ձեւ):

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակի օրերից, հունիսի 1-ից մինչեւ հուլիսի 1-ը՝ ժամը 10.00-15.00-ը: Քննությունները՝ հուլիսի 5-10-ը:
Փաստաթղթերը ներկայացնել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի քարտուղարություն:
Հասցե՝ ք. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, հեռ. 51-71-80, 51-71-82:

*ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

## (1066-1105)

*Սկիզբը՝ թիվ 4-6, 8-9*

Բարսեղ Անեցին, որ կաթողիկոսի աթոռակիցն էր, օգտվելով իր քեռու բարյացակամությունից, բուն Հայաստանում իիրավի կաթողիկոսություն էր անում, ըստ որում՝ այն աստիճանի, որ որոշ պատմիչներ նրան կաթողիկոս են համարում: Օգտվելով այն հանգամանքից, որ Մելիքշահը, եգիպտական հարձակումից գայրա-



ցած, արշավեց Եգիպտոսի դեմ եւ գրավեց Անտիոքը, Բերիան, Եդեսիան ու իր ձիով Միջերկրական ծով մտնելով ու թրով հարվածելով ծովի ջրերին՝ ասել է, որ Աստված իրեն իշխանություն տվեց Պարսից ծովից (իմա՛ Պարսից ծոց) մինչեւ Միջերկրական ծով, ինչպես նաեւ այն իրողությունից, որ մահմեդական ամիրաների մի մասը վայրագ վերաբերմունք ուներ քրիստոնյաների նկատմամբ, իսկ մյուսները խաղաղարար, Բարսեղ Անեցին որոշեց անձամբ ներկայանալ Մելիքշահ սուլթանին եւ կարգադրել հայոց գործերը, քանի որ հայկական բոլոր հողերը հայտնվել էին նրա իշխանության ներքո: Մելիքը, ստանալով նրա նվերները, նրան ամեն տեսակ պատիվներ տվեց, ընդունեց նրա բոլոր առաջարկները, հարկերից ազատեց եկեղեցին եւ հոգեւորականությանը՝ դրա համար հատուկ հրաման արձակելով: Բարսեղ Անեցին ճանապարհ դրվեց սուլթանի նշանավոր պաշտոնյաների ուղեկցությամբ: Գալով Հայաստան եւ առաջին հերթին ժամանելով Անի՝ նա այնուհետեւ ուղեւորվեց Հոնի, որտեղ կարգալույծ արեց Թեոդորոս Ալախոսիկին՝ վերցնելով նրանից քողը, գավազանը եւ սուրբ Պետրոսի նշանը, որոնք ժամանակին նրա նախորդին էր ուղարկել Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը: Թեոդորոսը մահացավ 5 տարի անց՝ 1095-ին: Մարաշում կաթողիկոս հռչակված Պողոս Վարագցին, տեսնելով, որ կաթողիկոսությունը հակաթոռ է, կամավորապես հրաժարվեց կաթողիկոսությունից, եւ ուժ գործադրելու կարիք չեղավ: Դրանից հետո սա էլ երկար չապրեց եւ մահացավ 1093-ին: Դատելով տեղեկությունների բացակայությունից՝ Գեորգ Լոռեցին այդ ժամանակ արդեն կենդանի չէր, Գրիգորի կաթողիկոսությունը Եգիպտոսում գոյություն ուներ զուտ անվանապես, իսկ ինքն էլ միշտ հնազանդ էր եղել հայոց հայրապետական իշխանությանը, այսպես կոչված Աղվանից կաթողիկոսությունը գալիս էր հնից եւ մշտապես ենթակա է եղել Հայոց կենտրոնական կաթողիկոսությանը, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը պաշտոնապես արտոնված էլ չէր, ուստի ապօրինի կաթողիկոսությունները վերացվեցին, եւ Բարսեղը միահեծանաբար իր ձեռքը վերցրեց հայրապետական իշխանությունը, սակայն գործնականում, քանի որ Գրիգոր Բ Վկայասերը դեռ կենդանի էր: Այս ամենը կատարվեց 1090 թվին:

Բարսեղ Անեցին Հոնիից Մարաշի վրայով 1091 թվի փետրվարի վերջին անցավ Ուռհա՝ նպատակ ունենալով այցելել այդտեղ հաստատված հայ գաղութականությանը, այնուհետեւ այնտեղից մեկնեց Կեսարիա, հետո Անտիոք եւ կրկին վերադարձավ Ուռհա՝ ուրախություն պատճառելով տեղի քրիստոնյաներին: Նա Ուռհայում էր գտնվում, երբ մահացավ Մելիքշահը, ուստի ներքին շփոթներից խույս տալով՝ նա փախավ Անի քաղաքը՝ իր հայրապետանոցը: Պիտի ասել, որ նման գործունյա կաթողիկոսի այցելությունը հայկական գաղթականության նոր բնակավայրերը մեծապես զորացրեց հայկական քրիստոնեությունը եւ Հայոց եկեղեցու ազդեցությունը: Օտար հողերում հաստատված հայ իշխանները հնարավորության դեպքում սեփական իշխանություններ էին ձեւավորում, որոնց դրությունը շատ էլ կայուն չէր եւ շատ հաճախ կախված էր այս կամ այն իշխանի ժամանակավոր հաջողություններից կամ մահվանից: Գագիկ Աշոտյանի, Գագիկ Աբասյանի, Ատոմ եւ Աբուսահլ Արծրունիների անվանական թագավորությունների անկումից հետո սկսեցին նոր իշխանություններ հանդես գալ, որոնցից էր Ռուբինյանների իշխանությունը Կոպիտառում: Դժվար է ասել, թե իրոք Բագրատունի էր Ռուբեն իշխանը կամ էլ Արծրունի, ինչպես հավաստում են պատմիչները, սակայն նա Պիզուի իշխան արքայիկ Գագիկ Աշոտյանի մտերիմներից էր, որը նրա եղերական սպանությունից հետո քաշվեց Բարձրբերդի կողմերը՝ տիրելով Կոպիտառ, Բարձրբերդ եւ Կոռոմոզոլ բերդերին, որտեղ դրանից առաջ էլ հայերը հաստատվել էին՝ քշելով տեղի հոռոմ, այսինքն՝ հույն բնակիչներին: Ռուբենի իշխանությունն աստիճանաբար ընդարձակվեց եւ ուժեղացավ, իսկ Ռուբենը հիմք դրեց Ռուբինյանների արքայատոհմին (մինչեւ 1198 թիվը՝ իշխանական): Իշխանությունը հիմնադրվեց 1080 թվին:

Ռուբինյաններից զատ, իշխանություններ հիմնեց Օշին Գանձակեցին Լամբրոնում, որը Հայոց Արեւելից կողմերում Մայրյացջուր բերդի տերն է եղել եւ գաղթել էր Բուղա զորավարի՝ դեպի Գանձակ արշավելու պատճառով՝ իր հետ վերցնելով իր եղբայր Հալկամին: Այս իշխանությունը բավական երկար գոյատեւեց, մինչեւ որ Ռուբինյաններն այն գրավեցին: Մեկ այլ կարեւոր իշխանություն էլ ստեղծվել էր Քեսունում՝ Կոմագենեի արեւմտյան մասում, իշխան Գող Վասիլի կողմից, որի ծագումը հայտնի չէ, իսկ Գող մականունը ստացել էր խաբեությամբ ուրիշի բերդերին տիրանալու պատճառով: Ներսես Շնորհալին գովում է նրա աստվածասիրությունը, սակայն խոստովանում է, որ նա ելուզակ է եղել: Անտարակույս հենց այս ճանապարհով էլ նա հիմք էր դրել իր իշխանությանը եւ ուժեղացել:

XI դարի վերջերին Առաջավոր Ասիան հայտնվեց նոր կացության մեջ՝ խաչակիրների հայտնվելով: Մինչ թուլացած Բյուզանդական կայսրությունը, Սելջուկյան եւ Եգիպտական իսլամական սուլթանությունները ծանր կռիվներ էին մղում՝ հարաբերական կայուն վիճակ ստեղծելու նպատակով, տնտեսական ցնցումներ ապրող Արեւմտյան Եվրոպան, որտեղ մանր ազնվականությունը՝ ի դեմս ասպետության, աղքատացել էր եւ դարձել հանրային անդորրը խանգարելու պատրաստ մի տարր, որին ցանկացած պահի կարող էին միանալ քայքայված գյուղացիները՝ ի դեմս Կաթոլիկ Եկեղեցու, որոշեց խաչակրաց արշավանքներ կազմակերպել՝ իբրեւ թե Տիրոջ գերեզմանը ազատելու նպատակով: Հայերը, որ սփռվել էին Առաջավոր Ասիայի տարածքի նշանակալից մասում եւ խիստ նեղվում էին մահմեդականներից, խաչակիրներին սպասում էին իբրեւ ազատարարների, չնայած հետագայում խիստ հուսախաբվեցին: Ստացվեց, որ հայերը հարվածվում են ե՛ւ Արեւելքից, ե՛ւ Արեւմուտքից: Թուրքական ցեղերը, որ Սելջուկի անունով սովորաբար հայտնի են Սելջուկյան ցեղեր անվանումով, օգտվելով Բյուզանդական կայսրության թուլացումից, ասպատակում էին Հայաստանը եւ ավարով ու գերիներով ետ դառնում: Այդ ասպատակություն-արշավանքնե-



րից մեկի ժամանակ դարանակալ մի թուրքի կողմից սպանվեց Բարսեղ կաթողիկոսի եղբայր Գրիգորը, որն Էլ-Ղազիի ցեղին հետապնդելով՝ Անի էր վերադառնում Աշորնեքի պատերազմից: Նա սպանվեց այնպես, ինչպես իր կնոջ մեծ պապ Վասակ Պահլավունին:

Մելիքշահի օրոք դրությունը քիչ թե շատ տանելի դարձավ, որն արդյունք էր պետության մեծ վեզիր Նիզամ-ուլ-Մուլքի սուլթանի վրա ունեցած ազդեցության: Սակայն քսու պաշտոնյաների խարդավանքների պատճառով Մելիքշահը նրան պաշտոնազրկեց: Իր հերթին Նիզամ-ուլ-Մուլքին էլ միացավ Մելիքշահի սպանությունը նախապատրաստող դավադիրներին, սակայն մահացավ նրա սպանությունից 18 օր անց: Մելիքշահն ուներ մի քանի զավակ՝ Բարկիարուխը, Սանջարը, Մահմուդը եւ Մուհամեդը, որոնք հայրենի ժառանգությունը միմյանց միջեւ բաժանեցին: Մելիքշահի դուստրը կնության էր տրված խալիֆ Մըքթատի-Պիամրալլահին, եւ նրանից ծնված Մըսթատըր-Պիլլահը Մելիքշահի ճնշմամբ հռչակվեց թագաժառանգ, չնայած խալիֆն ավելի մեծ տղա ուներ: Սա ժառանգեց խալիֆի աթոռը Մելիքշահից հետո, երբ 1094-ին Բարկիարուխը տիրացավ իշխանությանը՝ գահակալական պայքարում հաղթելով Ալփ-Ասլանի կրտսեր որդուն՝ Դդուշին, որը սպանվեց:

*Շարունակելի*

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՄԱԿԱՐԱՎԱՆՔ

Հայաստանն իր բազմաթիվ հոգեւոր պատմամշակութային հուշարձանների առկայությամբ իրավի մի խոշոր թանգարան է բաց երկնքի տակ: Այդ թանգարանի մի հատվածն էլ սփռված է Արեւելյան Հայաստանի Աղստեւ գետի հովտի գեղատեսիլ, բնական պաշարներով հարուստ տարածքներում: Իզուր չէ, որ դեռ հնուց այս տարածքը գտնվել է մեծահարուստ իշխանների ուշադրության կենտրոնում, որոնք այստեղ հիմնել են բազմաթիվ բնակավայրեր, կառուցել վանքեր, ամառանոցներ, պաշտպանական կառույցներ, հոգեւոր մշակութային կենտրոններ: Չնայած պատմական անցքերն ու դժնի ժամանակներն իրենց անցանկալի հետքն են թողել դրանց վրա, սակայն հաջորդ սերունդները, մասնակի վերականգնելով դրանք, շարունակել են դարավոր ավանդույթները, պահպանել հավատքը, լեզուն եւ մշակույթը:

Աղստեւի հովիտը շինարարական եւ կուլտուրական վերելք է ապրում, երբ այն անցնում է Մահկանաբերդի եւ Կայենի իշխաններ՝ Արծրունիների եւ Զաքարյանների իշխանության ենթակայության ներքո: Այդ ընթացքում կառուցվում եւ բարենորոգվում են մի շարք վանքային համալիրներ, զարգանում է վիմագրությունը, քանդակագործությունը, մշակույթը, կառուցվում են իջեւանատներ, կամուրջներ, մայրուղիներ:

«Տվյալ ժամանակաշրջանի Աղստեւի հովտի նշանավոր հուշարձանների թվին է դասվում Հաղարծինը, Գոշավանքը, Մակարավանքը, Դեղձուտը, Արվեղը, Առաքելոց եւ Կիրանց վանքերը, Ջուխտակը եւ այլն» (Ի. Բ. Էլլարյան, «Աղստեւի հովտի պատմական եւ մշակութային հուշարձանները», Երեւան, 1987 թ., ռուսերեն):

Այժմ փորձենք անդրադառնալ Մակարավանքի համալիրին՝ առավելապես իբրեւ պատմական հուշարձանի: Վանքը գտնվում է Իջեւանի շրջանի Աչաջուր գյուղից դեպի հարավ-արեւմուտք՝ երեք կմ հեռավորության վրա: Ըստ պատմաբանների՝ այն համարվում է միջնադարյան Հայաստանի 10-11-րդ դարի նշանավոր հուշարձաններից մեկը:

Մակարավանքը տարածքով ու չափերով համարվում է հայկական ոչ շատ մեծ վանքերից մեկը, սակայն իր գեղեցկությամբ ու կատարելությամբ պատկանում է առաջնակարգ հուշարձանների թվին, որը միայն վերջին դարում է դարձել ճարտարապետների, բանասերների, զբոսաշրջիկների ուշադրության առարկան: Վանական համալիրը Երեւանից մոտ 160 կմ հեռավորության վրա է գտնվում եւ կառուցված է Պայտաթափ կոչվող սարահարթի վրա: «Դիրքը բարձրահայաց եւ իշխող, այստեղից դիտողի առջեւ փռվում է Աղստեւ գետի ողջ հովիտը մինչեւ Քուռ գետը հատող լայնատարած տափաստանները, Աղստեւի աջափնյա հանդիպակաց լեռնաշղթայի համայնապատկերը անտառապատ լանջերով ու անդնդախոր ձորերով» (Դիվան հայ վիմագրության, էջ 155):

Դիմահայաց կողմում բացվում է հնակառույց շինությունների մի հարուստ համայնապատկեր:

Համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից, գավթից, աղբյուրից, դարպասից, հանգստարանից եւ այլ օժանդակ շինությունների ավերակներից: Ամենավաղ շինությունը հին եկեղեցին է, որը տեղակայված է համալիրի հյուսիսարեւելյան կողմում: Մուտքը միայն արեւմտյան կողմից է, որով հաղորդակցվում է գավթին:



Գլխավոր եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն է (13,5x9,5 մ), ներքուստ խաչաձեւ՝ ընդարձակ եւ լուսավոր երկհարկանի օթյակներով, հիմնական մուտքը արեւմուտքից է, իսկ հյուսիսային կողմի մուտքը տանում է դեպի գավիթ: Կառուցման ժամանակը մինչ հիսունական թվականներն անհայտ էր: 1953 թվականին վանքի տարածքը ուսումնասիրելու եւ մաքրելու ժամանակ Գ. Խ. Սարգսյանի կողմից հայտնաբերվում է ջարդված եւ չորս կտորի բաժանված մի խոշոր խաչքար, որի թիկունքին փորագրված էր ընդարձակ մի արձանագրություն՝ կառուցողների (Հովհաննես Ա-ի վանահայրության տարիներին Բազազ իշխանի որդի Վարդանի կողմից ի հավերժացում կառուցողի եւ նպաստավորողների հիշատակի) եւ կառուցման թվականի (1205 թ.) տվյալներով (Դիվան հայ վիմագրության, պրակ 6, էջ 153): Այստեղ շինության արձանագրությունը, ըստ կարգի, փորագրվել է ոչ թե եկեղեցու վեմին, այլ նշված խաչքարի վրա: Այն կանգնեցված է եղել եկեղեցուց ոչ հեռու՝ հարավային պատի արեւելյան անկյան մոտ՝ հատուկ պատվանդանին: Հետագայում երկրաշարժի պատճառով տանիքից թափվող քարերը տապալել են խաչքարը:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

*Սկիզբը՝ թիվ 9*

Մեծ դահճապետի՝ Ստալինի մահից հետո մթնոլորտը փոքր-ինչ մեղմացավ. հանիրավի բռնադատվածներն ազատվեցին բանտերից ու աքսորից, անտեղի գնդակահարվածները հետմահու արդարացվեցին, մեր ժողովրդին վերադարձվեցին շուրջ 20 տարի արգելված ազգային գրական արժեքները: Եվ առաջիններից մեկը Պ. Սեւակն էր, որ ազդարարեց իր գեղարվեստական մտածողության շրջադարձը եւ խոսեց արդեն առանց սեփական ձայնը փոխելու: Արդեն առնականացել էր բանաստեղծի ձայնը, կայացել նրա ինքնահաստատումը: Երիտասարդ, անգամ հասուն Պարույրի համար, սակայն, 1940-60-ական թթ. միակուսակցական վերին հրամայականով դեռեւս կային գաղափարական պարտադրանքներ, գրեթե անհաղթահարելի դժվարություններ, որոնք բանաստեղծին հեռացնում էին այն ժողովրդից, ում համար ստեղծագործում էր ինքը: Պ. Սեւակի իսկ բացատրությամբ՝ ինքն իր հետ եւ ժողովրդի հետ նորից անկեղծ խոսելու մղումով 1957 թ. ժողովածուն վերնագրեց «Նորից քեզ հետ»: Դրանից հետո գրեց «Մարդը ափի մեջ» շարքը, այնուհետեւ 1957-58 թթ. Մոսկվայում իրականացրեց իր վաղեմի երազանքը՝ գրելով «Անլռելի զանգակատուն» պոեմը: Դրանով նա հանդգնել էր իրականացնել պատմական մեծ առաքելություն:

Նախ՝ ընթերցող հանրությանը նա ինքը ներկայացավ որպես կայացած, ինքնատիպ ու հասուն բանաստեղծ՝ իր ուրույն ձայնով ու ասելիքով:

Երկրորդ՝ այդ պոեմն իր նախադեպը չուներ հենց ժանրի առումով եւ, որպես գեղարվեստական կառույց, շատ էր տարբեր ժանրի ավանդական ըմբռնումներից՝ գրական այդ տեսակի արտացոլման հնարավորություններն ընդլայնելու իմաստով:

Երրորդ՝ այստեղ միավորվել էին գիտնականի ու գեղագետի լայն իմացությունները ու հնարավորությունները. հայոց պատմությունը, աշխարհագրությունն ու ազգագրությունը, հայ մարդու ողբերգական ճակատագիրն ու հերոսական կյանքը, ազգային բնավորությունն ու մարդկային նկարագիրը, կենցաղն ու սովորույթները, ժողովրդական ու հոգեւոր տարաբնույթ երգերը դարձան այնպիսի հենք, որի վրա հյուսվեց մեծագույն հայերից մեկի՝ «մեր երգի Մեսրոպ Մաշտոց» Կոմիտասի կենսագրությունը:

Բայց դա մի թեկուզ խոշորագույն անհատի կենսագրություն չէր միայն, այլ հայության շուրջ հարյուրամյա պատմության գեղարվեստական տարեգրությունը, որը ցնցեց ժամանակի՝ Դ. Վարուժանի խոսքով ասած՝ «թմրած ոգերին» ու հարկադրեց այլ հայացքով նայել մոտիկ անցյալի ողբերգական իրադարձություններին:

Ամենուր արտասանվող այդ պոեմն իր բոցավառ էջերով դարձավ ոչ միայն Կոմիտասի կյանքի լավագույն գեղարվեստական պատումը, այլեւ ունեցավ վիթխարի ճանաչողական նշանակություն՝ նոր սերնդի ազգային ինքնագիտակցությունը, արժանապատվությունն ու հայրենասիրական ոգին արթնացնելու իմաստով: Սրան պիտի հաջորդեր եղեռնի թեման գեղարվեստորեն մարմնավորող ավելի նպատակային գործ՝ «Եռաձայն պատարագ» պոեմը, որի տպագրությունը, նաեւ արգելումը տեսավ եղերաբախտ բանաստեղծը:

***

Մոսկվայից Պ. Սեւակը Հայաստան էր վերադարձել գիտելիքների վիթխարի պաշարով ու ստեղծագործական լուրջ ծրագրերով: Բանաստեղծի, գրականության պատմաբանի, տեսաբանի ու քննադատի կարողությունները իր մեջ համատեղող այդ հզոր անհատականությունը դարձավ նաեւ ժամանակի գրական կյանքի կազմակերպիչներից մեկը. Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող էր նա, Հայաստանի գրողների միության քարտուղարներից մեկը, ընտրվել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: Որպես գրաքննադատ՝ եռանդով մասնակցում էր 1960-ական թթ. գրական կյանքին՝ հանդես գալով հայ դասական ու արդի գրականության մասին բազմաթիվ ելույթներով, տեսական ու բանավիճային ծանրակշիռ հոդվածներով, որոնք այսօր էլ արդիական են: Եվ դրանց մեջ՝ մեր գրականության ապագայի մասին բացառիկ ուժով, խոր սրտացավությամբ ու ազնիվ կրքով գրված հոդվածներ՝ «Հանուն եւ ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի», «Դժվարը իրենից հասուն լինելն է», «Քննադատությունն այլեւս հավելված չէ» խորագրերով: Գր. Նարեկացու, Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Պետրոս Դուրյանի, Հովհ. Թումանյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Վ. Տերյանի, Եղ. Չարենցի, Ս. Կապուտիկյանի, Գեւորգ Էմինի եւ 60-ական թթ. երիտասարդ սերնդի ստեղծագործության բնութագրման ու արժեւորման մեջ անուրանալի է Պ. Սեւակի կողմնորոշիչ դերը: Ավելին. հենց այդ շրջանում էլ նա հանդես եկավ բանաստեղծական մտածողության բարեփոխման իր ծրագրով ու դարձավ գրական երիտասարդության ուսուցիչն ու առաջնորդը:

Այս ամենին նա զուգակցում էր նաեւ գիտական-բանասիրական գործը. 1967-ին նա հրապարակային պաշտպանության ներկայացրեց «Սայաթ-Նովա» աշխատությունը՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար, սակայն մասնագիտական խորհուրդը, նկատի ունենալով այդ աշխատության բացառիկ արժեքը, նրան միանգամից շնորհեց բանասիրության դոկտորի գիտական աստիճան, մի բան, որ հազվադեպ երեւույթ էր ողջ խորհրդային գիտական աշխարհում:

Պ. Սեւակը գնալով զորեղացավ, դարձավ ժամանակի հայ իրականության կարեւորագույն դեմքերից մեկը եւ հայ գրական մտքի գերազանցությունը, բարձրագույն մի մտավորական, որն անհանդուրժող էր հնազանդության, միջակության, կիսատ-պռատության, ստի ու կեղծիքի հանդեպ: Նրա նախորդներից մեկը՝ Հովհաննես Շիրազը, գրական հզոր ընդդիմություն էր, իր սեփական օրենքներով կառավարվող մի ուրույն ազգային պետություն՝ խորհրդային պետության մեջ: Պ. Սեւակը, չնայած գրական դպրոցի, ստեղծագործական սկզբունքների եւ գեղարվեստական մտածողության ակնհայտ տարբերություններին, կանգնեց նրա կողքին որպես ե՛ւ գրական, ե՛ւ գիտական ընդդիմություն, որն առանձին՝ հայ մարդու, հզոր քաղաքացու իր հերոսական կռիվն էր մղում պետական կեղծիքի դեմ, եւ պետությունը վախենում էր ե՛ւ այս բանաստեղծներից յուրաքանչյուրից առանձին-առանձին, ե՛ւ մանավանդ նրանց միավորվելուց: Ահա թե ինչու խորհրդային պետական մեքենան նրանց հակադրում ու գժտեցնում էր տարբեր պատրվակներով ու եղանակներով, որովհետեւ նրանց համերաշխության մեջ իր համար գաղափարական պարտության մեծ վտանգ էր տեսնում: Բայց ի պատիվ Պ. Սեւակի պետք է ասել, որ նա չդարձավ պետության կամակատարը, ընդհակառակը, դարձավ հայության եւ հայ գրականության շահերի իրավապաշտպանը: Երբ ամենուր, անգամ պետականորեն փորձում էին վարկաբեկել Հովհաննես Շիրազին, նա ազնվորեն հրապարակավ պաշտպանում էր իր մեծ նախորդին՝ հայտարարելով, թե «նրա՛ ողնաշարի վրա է բարձրացել հետչարենցյան շրջանի մեր ամբողջ գրականությունը, բայց պետությունը նրա 50-ամյակը նշեց ամոթալի լռությամբ այն դեպքում, երբ միջակություններին փառաբանեց հատորյակների հրատարակումով ու պետական բարձրագույն պարգեւներով»: Նման դառնացնող ու զայրացնող, ատելի երեւույթներ շատ կային խորհրդային իրականության բոլոր ոլորտներում:


Գործ՝ Ս. Մուրադյանի

*Շարունակությունը՝ էջ 7*

# «ԳԻՆՈՒ ԿԱՐԱՍՆ՝ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ, ԻՆՁ ՀԵՐԻՔ Է ՔՈ ՄԻ ԹԱՍԸ»...

Փառք Աստծո, դեռ կան մարդիկ՝ ժողովրդի նվիրյալ զավակներ, գործիչներ, որոնք իրթիռի պես առաջ են տանում ու գալիքին փոխանցում մարդկության ձեռքբերումները: Այդպիսին էին Կոմիտասի անվան քառյակի հիմնադիրները. մեծ ջութակահար Ավետ Գաբրիելյանը եւ իր համախոհներ Լեւոն Օհանջանյանը, Միքայել Տերյանը եւ Սարգիս Ասլամազյանը: Այդպիսին է եւ անվանի ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր, պրոֆեսոր Էդուարդ Թադեւոսյանը, ով «կոմիտասյան» ջահը ժառանգեց անմիջապես Գաբրիելյանից եւ մինչ օրս այն վառ է պահում՝ դառնալով անցյալը ներկային կապող մի կամուրջ:


*Կենտրոնում՝ Ա. Գաբրիելյան, Գ. Մարկազյան, Դ. Գրիգորյան, Է. Թադեւոսյան*

Այս քառյակն իր դիմագծով անկրկնելի է: Չէ՞ որ տասնամյակներ շարունակ աշխարհով մեկ սփռել եւ շարունակում է տարածել Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի, Շոստակովիչի եւ հայ կոմպոզիտորների գլուխգործոցները, ինչպես նաեւ Կոմիտասի հայրենաշունչ երգերից բխած կոթողները եւ այլ երկեր:

Ասվածի վկայությունն էր նաեւ 80-ամյա հոբելյանին նվիրված հերթական համերգը, որը տեղի ունեցավ Կոմիտասի անվան կամերային երաժշտության համերգասրահում: Ի դեպ, Մոցարտի ծննդյան 250-ամյակի առթիվ 2006 թվականը ՅՈՒՆԵՍԿՕ-ն հռչակել է որպես «Մոցարտյան տարի», եւ դա չէր կարող չանդրադառնալ քառյակի ծրագրի ընտրության վրա:

Հնչեցին Մոցարտի դիվերտիսմենտը (KV 138), Էդվարդ Միրզոյանի կվարտետը եւ Մոցարտի կլարնետային կվինտետը (KV 581): Կլարնետի մենանվագը կատարեց Մոսկվայի Մեծ թատրոնի մենակատար, պրոֆեսոր Ռաֆայել Բաղդասարյանը:

Համերգի ծրագիրն ընտրված էր ճաշակով, դրամատուրգիական նրբին զգացողությամբ եւ փնջված ըստ բնույթի, գործերի հաջորդականության եւ այլ գործոնների: Այժմ փորձենք պարզել, թե ինչ խնդիրներ են ծառանում, եւ ինչպես են դրանք լուծվում կատարողների կողմից: Միայն այս դեպքում կարելի է ըստ արժանվույն գնահատական տալ այդ նվիրական համերգին:

Չորս նվագարաններից բաղկացած երաժշտախումբը մարմնավորում է մարդկային ձայների ոլորտները. արական՝ բարձր եւ ցածր, իգական՝ նույնպես բարձր եւ ցածր: Քառյակային այս սկզբունքի վրա է կառուցված եւ սիմֆոնիկ նվագախումբը՝ գործիքների առանձին «ընտանիքները»:

Ձայներն արտացոլում են նաեւ երկխոսության գաղափար՝ տարաձայնություն - համաձայնություն, հակամարտություն - միաբանություն:

Հիրավի, Մոցարտի երաժշտությունը հենց այդ եդեմական պարտեզն է, ուր տիրում են գեղեցիկը, անստվեր լույսը, անմահությունը: Սակայն Մոցարտը Մոցարտ չէր լինի, եթե միեւնույն ժամանակ չպատկերեր նաեւ կյանքի մյուս կողմը՝ ողբերգականությունը: Ահա այս հակադրամիասնությունն է, որ Գեորգի Չիչերինն արտահայտում է Շարլ Բոդլերի խոսքերի միջոցով:

*Ասա՛, որտեղի՞ց ես դու,*
*Գեղեցկություն, ասա՛,*
*Հայացքդ երկնի լազո՞ւրն է,*
*թե՞ դժոխածին է այն...*

Ահա այս «դժոխածին հայացքը» հաճախ չի նկատվում, քանզի կա՛մ քողարկված է, կա՛մ երկնքի լազուրում փայլատակող կայծակի պես անսպասելի է ու հպանցիկ: Ահա այս քողարկվածությունն է պատճառը, որ երկար ժամանակ Մոցարտին դիտում էին որպես մի հրաշամանուկ, արեւամանուկ, որի երաժշտությունը լոկ անհոգ բերկրանք է արտահայտում: Լինում են եւ ողբերգականության բացահայտ դրսեւորումներ՝ պայթյունի պես ակնհայտ: Նման մի պատկեր Հերման Աբերտը բնորոշել է որպես մեդուզայի սահմռկեցուցիչ հայացք: Երաժշտագետը նկատի ուներ Մոցարտի Ռեքվիեմի 1-ին մասի 98-րդ տակտի «ժայռակոփ» ակորդը, որին բախվում է հնչյունային վիթխարի զանգվածը ու մի պահ քարանում...

Նման ցնցումներ, սակայն կարճատեւ, տեղի են ունենում եւ համերգը բացող բերկրալից Դիվերտիսմենտի 2-րդ մասի «մինոր» դրվագում եւ Կլարնետային կվինտետի 2-րդ մասում: Այստեղ մեղմոցով մշուշված ջութակների թեւերով ճախրող կլարնետը հանկարծակի «դրախտից» գահավիժում է սանդարամետ, այսինքն՝ ստորին ռեգիստրի ոլորտը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

## (≈1250 - ≈1314/1328)

*Սկիզբը՝ թիվ 6-9*

«Շահնամայի ձայնով» Երզնկացին ստեղծում է մտքի զարգացումով պայմանավորված ներքին դիպաշար: Եվ ի՞նչ է նրա ասածը.

*Լսել պարտ է մեզ բանք յիմաստասիրաց,*
*Կամաւ հեռանալ մեզ ի զատ յանգիտաց,*
*Չլինել կարճամիտ եւ ի սըրտե թերի,*
*Չլինել մարմընոյս մեր ծառայ եւ գերի:*

*Այս կեանքս է ունայն եւ ժառանկ ենք մահու,*
*Չունի մեզ ըղըունք բարութեան եւ շահու,*
*Երազ է խաբող եւ խայալ անցաւոր,*
*Է՛ սուտ՝ սիրելի եւ ընկեր նենգաւոր:*

Մահվան առջեւ այս ունայն աշխարհի փիլիսոփայությունն է, որ դառնում է մտքի տրամաբանական անցումների դիպաշարային հիմք: Մահ, որ կարող է տանել ե՛ւ գազան Ղազան խանին, ե՛ւ նրանց, ովքեր ռումբ ու գուրզ էին նետում իրար վրա, ե՛ւ նրանց, ովքեր գեղեցիկ էին ու ցանկալի.

*Դարձել են փոշի եւ ոսկերք են ցամաք,*
*Այն անձն, որ պայծառ էր քան զձյուն սպիտակ:*

*Եղբա՛յրք, լսեցեք զայս ի սրտէ սիրով,*
*Որ ես շինեցի զբանքս ի մըտաց գըրով:*

*Ոչինչ է այս կեանքս ու չունի դիւրութիւն,*
*Դու այլ մի՛ խաբիր, քէզ զարթիր,*
*Կոստանդին...*

Այս իմաստությունն ուղեկից է նրանց, ովքեր աշխարհիկ կյանքից անդին տեսնում են հավիտենությունը, ովքեր նաեւ իրենց պարտվածությամբ են ժխտում այսօրեական փառքը, որովհետեւ իրենց ուժն ու նշանակությունն զգում ու գիտակցում են ավելի մեծ ժամանակի մեջ:

Անգետն ու հիմարը, չարն ու նախանձը եղել են որոշակի մարդիկ, ովքեր ուղեկցել են Երզնկացուն: Այսպիսիների ներկայությունը նա հատկապես ծանր է տարել, երբ նրանք կասկածի են ենթարկել գրողի ստեղծագործական ձիրքը, գրական տրվածքը: Ահա նրանց է հասցեագրված այս երկար վերնագրով բանաստեղծությունը. «Ոմանք չարախաւսեն զինէն վասն նախանձու, թէ. որպէ՞ս խաւսի սա այսպիսի բան, զի վարդապետի չէ աշակերտել. զի ա՛յլ է աշխատիլն եւ ա՛յլ է շնորհքն ի հոգւոյն, զոր ես պատմեմ ձեզ, յաղագս տեսլեան իմոյ, զոր տեսի զարմանալի տեսիլ, մինչ ի վանք կայի հնգետասան ամաց, զոր տեսի այր մի արեգակնազգեստ եւ լի լուսով»: Գործ ու մութ մարդկանց կասկածանքը հանդեպ ստեղծագործողի ի սկզբանե ճշտում է խոսքի ընթացքը.

*Ոմանք չար են հետ ինձ ու նախանձով են յիմ վերայ,*
*Վասն իմ գըրել բանիս, որ առ մարդիկ երեւենայ.*
*Ասեն թէ՝ Ո՞նց գըրէ բան քաղցրահամ ու մեզ կարդայ,*
*Որ ի մեր միջիս ընգեր կամ համեմատ իւր չունենայ:*

Այսպիսի մարդիկ, ըստ Երզնկացու, եւ իրականում էլ, «կոյր են հոգւով աչաւք, մըտաւք յիմար են, անյիմայ»: Իրեն լողներին նա բացատրում է, թե ինչպես է հասել իր այս շնորհներին.

*Ես երբ հընգետասան ամաց էի մանուկ տըղայ,*
*Ի վանքն յուսումն էի եւ գիշեր մի տեսիլ տեսայ.*
*Մանուկ ի լուսեղէն յաթոռ նըստել որպէս արքայ,*
*Նըման արեգական է գեղեցիկ, որ լոյս կու տայ:*

Տեսիլքի մեջ նրանք խոսում են. բժշկի՛ր ինձ, ասում է երկիրածինը. «Հոգոք հիւանդ եմ, զքեզ բժիշկ ինձիկ գըտայ»: Տերը պատասխանում է քաղցր ձայնով եւ ասում է՝ գնա՛: Անցնում է որոշ ժամանակ, եւ բանաստեղծը պատմում է տեսիլքի եւ իր հետ կատարվածի մասին.

*Ես ոչ ի միտք բերի, թէ այս տեսիլս ի՛նչ իրք լինայ,*
*Եւ ոչ զնա քըննեցի, զի հասակովս ի ես տըղայ.*
*Երբ այլ բազում աւուրք ես ի յուսումըն վարժեցայ,*



*Ապա զմըտաւ ածի ու զայն խորհուրդըն հասկացայ*

*Եղեւ յանկարծակի ինձ բան խաւսիլ՝ ով ուզենայ,*
*Այնպէս, որ ես ի յիմ խաւսից շարելըն զարմացայ,*
*Սիրով ու մեծ լուսով ես այս բանս ի փորձ մըտայ,*
*Չիզգիս փոխան տըւի, ՚ւ ապա ես այն հոգոյն հասայ:*

Նա ասում է, որ իր գրելու ձիրքը երկնքից իր վրա է իջել որպես մանանա, որ դա աստվածային տրվածք է: Բանաստեղծությունն ավարտվում է այս տողերով.

*Ես եմ մէջ աշխարհիս զերդ ըղյիմար ի յանդիշայ.*
*Ոմանց թըւիմ խելաւք, ոմանց խիստ խեւ եւ անյիմայ,*
*Ոմանք չարին հետ ինձ, կրճեն ատամն ի յիմ վերայ,*
*՚Ւ ոմանց պատեհ թըւի զարհւնս հեղուլ իր կամ լինայ...*

Իրեն տրված մեծագույն շնորհը, իր դեմ եղած հարձակումներին դիմագրավելու իրենց վայել մարտավարությունը Երզնկացին տեսնում է իր արվեստի մեջ: Արվեստի լույսը, ներշնչանքով Աստծուն հաղորդակցվելու ներքին տարերքը ուժ են տալիս նրան եւ պահպանում չար, նենգ, դավադիր, թունոտ, անիմա ու գործ մարդկանց մեջ: Գրելու շնորհը աստվածային պարգեւ համարելով՝ նա նաեւ փորձել է այդ ձեւով պաշտպանվել, որովհետեւ եթե շրջապատի չարամիտ տգետները իմանային, թե այդ շնորհը իրենից է ու բնածին, ապա կոչնչացնեին նրան: Ինչպե՞ս թե՝ դու ստեղծագործե՞ս ու մեզ խրա՞տ տաս, - կասեին նրանք, եւ կսկսվեր հաշվեհարդարը: Իսկ այսպես Աստծու անունը կպաշտպաներ նրան, եւ թշնամիների հանդգնությունը վտանգի սահմանը չէր անցնի:

Երզնկացին խորացնում է անձնական քնարերգության կենսագրական կողմը, որի լավագույն արտահայտությունը «Բանք խաւսիլ ի ժամ տրտմութեան, զոր գրեցի առ պահ[ն] [վասն] սուտ եղբարաց, զոր վիրաւորեցայ» տաղն է: Իր կյանքի տխուր պատկերն է այստեղ, ուր կա ե՛ւ մարդկային հաչ, ե՛ւ հոգեմաշ վիճակ: «Ես չունիմ հանգստութիւն ՚ւ ուրախութեան ինձ չըկայ ճար, Որ մի պահ հանգիստ առնում կամ դուրանայ կեանքըս դըժար»,- գրում է նա՝ իրեն նմանեցնելով ալեծուփ ծովի, որի փրկության ափերն անգամ չեն երեւում: Միայնակ ու հալածական մարդու կերպար, որին «կու ատեն թշնամաբար»: «Է՜, գերի սիրտ՝ լի աւրեամբ քանի՞ կենաս հըրովտ ի վառ»,- դիմում է ինքն իրեն բանաստեղծը եւ բացահայտում իրեն շրջապատած կեղծիքի («սուտ կենցաղոյս») ամբողջ ողբերգությունը: Վերջում ինքն իրեն հեզության խրատ է տալիս եւ ասում՝ քեզ մի մաշիր անցավոր կյանքի համար, քանի քանիսն ընդունեցին այս կենցաղը, «առին դադար» եւ սուզվեցին ծովի հատակը «որպես կապար»:

Երզնկացու քնարերգությունը քրիստոնեական հավատի եւ մարդու ճակատագրի արտահայտություն է: Մարդու ճակատագիրը ժամանակի մեջ՝ սա այն հիմնական մոտիվն է, որ Ֆրիկից սկսած՝ նոր ճանապարհ բացեց մարդու եւ աշխարհի հարաբերության մեջ: Հոգու փրկության քարոզչությունը շարունակվում է՝ ըստ էության ձուլվելով ոչ միայն ընդհանրապես մարդու, այլեւ որոշակի անձնավորված մարդու փրկության գաղափարներին: Այդ որոշակի մարդը ինքը՝ հեղինակն է, իր անձնական կյանքի դրվագներով: Այդ իսկ պատճառով սա նաեւ անձնական քնարերգություն է՝ նախ որպես անձնական կյանք ու ճակատագիր, ապա եւ՝ որպես սիրո արտահայտություն:

**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ** տեսակետից Կոստանդին Երզնկացին ուշագրավ է հատկապես չափածո խոսքի կշռույթի կանոնիկացման եւ ներդաշնակության կատարելագործման հարցում:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՄԱԿԱՐԱՎԱՆՔ

*Սկիզբը՝ էջ 3*

Համալիրի կառույցները, որոնք երկար ժամանակ անխնամ մնալու հետեւանքով քայքայվել էին եւ գտնվում էին անբարվոք վիճակում, տասնամյակներ առաջ պետության կողմից վերանորոգվեցին: Ժամանակին՝ դարեր առաջ, վանքն ունեցել է ընդարձակ կալվածքներ, խոշոր միաբանություն,



բանվոր-ծառայողներ, որոնք մշակել են հողատարածքները, շահագործել անտառը, եկամուտ ստացել, իսկ այսօր հուշահամալիրը հանդիսանում է լոկ պատմամշակութային հուշարձան: Վանքի կառուցվածքի մասն է գավիթը: Այն կառուցվել է 13-րդ դարի առաջին քառորդում, արեւելքից կից է հնագույն եկեղեցուն: Գավիթը չորս սյուներով կենտրոնակազմ հորինվածք ունի, կառուցված է վարդագույն սրբատաշ քարերով: Ինչպես շքամուտքի վրա, այնպես էլ ներսից կան բազմաթիվ զարդաքանդակներ:

Հաջորդ հուշարձանը փոքրիկ եկեղեցին է, որը կառուցվել է 1198 թվին՝ վանահայր Հովհաննես Ա-ի օրոք: Ներքուստ խաչաձեւ է, արտաքուստ՝ ուղղանկյուն կենտրոնագմբեթ եւ կրում է Սուրբ Աստվածածնի անունը: Զարդարված է բազմաթիվ հարթաքանդակներով, ունի գեղաքանդակ շքամուտք: Այն կանգնած է հիմնական հուշարձաններից դեպի արեւելք, իսկ նրան հյուսիսից կից է մի փոքրիկ կիսավեր մատուռ: Համալիրն իր զարդաքանդակներով եւ ինքնատիպությամբ, ըստ մասնագետների, կարեւոր տեղ է գրավում հայ ճարտարապետության մեջ:

Կիրակոս Գանձակեցին իր Հայոց պատմությունում գրում է. «Հաբերդի Վախթանգ իշխանի կին Արզու Խաթունն իր աղջիկների հետ այծի փափուկ մազից մի գեղեցիկ ասեղնագործ նկարազարդ վարագույր է գործում եւ նվիրում Գոշավանքին, Հաղբատին, Մակարավանքին եւ Դադի վանքին»:

1892 թվին «Արաքս» ամսագիրը, իր Ա համարի 36-39 էջերը նվիրելով այս հուշարձան-համալիրին, գրում է, որ մինչեւ 1881 թվականը վանքն ունեցել է իր վանահայրերը, սակայն այդ օրից, երբ վերջին վանահայր ծերունի Գրիգոր վարդապետը (արդար Դավիթ մականունով) անհայտ չարագործների կողմից սպանվում է, վանքը գազանների եւ թռչունների որջ է դառնում:

Ինչպես Ղազախու վանքերից շատերի, այնպես էլ Մակարա վանքի մասին, գրում է «Արաքսը», հայ ժողովրդի բերաններում պտտվում են հարյուրավոր ավանդություններ՝ կապված մենաստանի փառավոր անցյալ հետ: Դրանցից մեկը պատմում է այն մասին, թե ինչու Մակարա վանքն անվանվել է նաեւ Ագռավա վանք: Հնում Մակարա վանքը, ժամանակի հարուստ մենաստաններից մեկը լինելով, գրում է «Արաքսը», ուներ հարյուրից ավելի միաբան եւ մեծամեծ կալվածներ, որտեղ աշխատում էին բազմաթիվ բանվորներ, որոնց կերակուրը հայթայթում էր վանքի ընդհանուր մատակարարը: Ավանդությունը պատմում է, թե մի օր դաշտում, բանվորների համար կերակուր պատրաստելիս, մի օձ մատակարարի անուշադրությունից օգտվելով, սողալով գալիս ընկնում է կերակուրի կաթսայի մեջ: Այդ բանը տեսնում է միայն վերեւում սլացող ագռավը: Թռչունը, խղճալով մարդկանց, սկսում է անդադար պտտվել կաթսայի շուրջը եւ աղաղակել, որպեսզի այդ կերպ կարողանա մատակարարի ուշադրությունը հրավիրել այդ բանի վրա, սակայն, տեսնելով, որ գլխի չի ընկնում, վրդովվում է, եւ այն միջոցին, երբ մատակարարը պատրաստվում է կերակուր բաժանել բանվորներին, ագռավը, գնդակի արագությամբ ներքեւ սլանալով, իրեն ձգում է կաթսայի մեջ: Բոլորը զարմանում են այս երեւույթի վրա, սակայն նրանց զարմանքը փարատվում է այն ժամանակ, երբ կաթսան մաքրելուց հետո տեսնում են ագռավի հետ կերակուրի մեջ խաշված մի օձ:



Միայն այդ ժամանակ են հասկանում կատարվածի էությունը...

Մեր պատմական հուշարձանները ու նրանց անցյալը խոր հետաքրքրություն են առաջ բերում հայ հասարակության, հատկապես երիտասարդության շրջանում, նրանցից շատերը խմբերով կամ միայնակ այցելում են այդ սրբավայրերը, ծանոթանում նախնիների կառուցած ճարտարապետական գլուխգործոցներին, նրանց պատմական անցյալին, աղոթք են անում, մոմ վառում, խոնարհվում նախնիների հիշատակին եւ նվիրական ուխտը կատարելուց հետո հեռանում թեթեւացած եւ մաքրված՝ տանելով իրենց հետ բնության հրաշագեղ այդ տեսարանների եւ սրբավայրերում ստացած տպավորությունների մասին լավագույն հուշեր, որոնք ստեղծվել են դարեր շարունակ, լիցքավորել հավատացյալներին, որով պահպանել ազգային դեմքը, հավատը, լեզուն:

**ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ**

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԳԻՐԸ



Սկիզբը՝ թիվ 4-9

Հենց այն հանգամանքը, որ ըստ Կորյունի եւ Խորենացու՝ Մեսրոպ Մաշտոցն առաջինը Գողթնի հետ է կապում իր ժողովրդի ցավին մի ելք գտնելու, այսինքն՝ հայոց նշանագրերը գտնելու գաղափարը, համոզիչ ցույց է տալիս, որ նա խսկապես նպատակ էր դրել դեռեւս հին հավատը պահպանած գավառում, գուցե նաեւ Ուտիքի Գիսն կոչված Ճախճախուտ կայանում (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի. քննական բնագիրը եւ ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, հտ. Ա, գլ. ԻԷ, էջ 95) ծվարած հեթանոս հայերի եւ նրանց քրմերի մոտ գտնել հեթանոսական շրջանի հայոց գրի ու մատենագրության հետքերը:

Իսկ որ Մեսրոպն ու Սահակը նպատակ ունեին նախ եւ առաջ գտնել նախաքրիստոնեական հայոց գիրը, հաստատում է դարձյալ ինքը՝ Կորյունը, ըստ որի՝ աշխարհահոգ խորհրդից հետո, որտեղ որոշում ընդունվեց «ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել», Մեսրոպն ու Սահակը շատ հարցուփործով ու քննությամբ անձամբ պարապեցին եւ շատ նեղություններ կրեցին - «Բազում հարցուփործի եւ քննութեան զանձինս պարապեցուցեալ եւ բազում աշխատութեանց համբերեալ» (Կոր., [Զ], էջ 42):

Ի՞նչ էին որոնում շատ հարցուփործով եւ քննությամբ, եթե ոչ նախկինում գոյություն ունեցած հայոց գիրը: Եվ սա՝ նախքան Դանիելյան կոչված նշանագրերի երեւան գալը: Զուր չէ, որ Ղազար Փարպեցին եւս հաստատում է հայոց հին գրի գոյությունը՝ Մաշտոցին վերագրելով հետեւյալ խոսքերը, որ բանաստեղծները աշխատել են այլ ընդ այլոյ մեկնաբանել. «Մանաւանդ թէ զոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ եւ ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս արանց եւ կանանց առ հասարակ յամենայան եկեղեցիս բազմութեանն» (Փարպ., Ա. Ժ, էջ 14):

***

Այս ամբողջ նախագրային շարժումը 4-րդ դարի վերջին եւ մանավանդ Հայոց աշխարհի եպիսկոպոսների ժողովը՝ «աշխարհահոգ խորհուրդը», երբ բոլոր եպիսկոպոսները ժողովվել էին Մեծն Սահակի եւ Մեսրոպի մոտ՝ հայերեն գրերի գյուտի մասին հոգալու՝ «հոգալ զգիւտ դպրութեան Հայոց», չէին կարող աննկատ մնալ ասորի հոգեւորականների աչքից, որոնք Պարսկահայաստանի Հայ Եկեղեցու կյանքում զգալի դեր ունեին՝ սկսած Գրիգոր Լուսավորչի ժամանակներից: Տեսնելով հետզհետե թափ առնող հայ ազգային գրի ու դպրության շարժումը եւ լավ հասկանալով իրենց հանդեպ հայ ժողովրդի մեջ տիրող բացահայտ հակակրանքը՝ ասորի կղերը, քանի որ չէր կարող այլեւս առաջն առնել, որոշեց սկզբից եւեթ իր համար ցանկալի հունով տանել Հայաստանում ծավալված հայերեն գրերի ստեղծման գործը, քանի դեռ հույներն այդ չէին արել իրենց բաժին Հայաստանում: Հաջողելու դեպքում ասորի Եկեղեցին գերակա իրավունք էր ստանում սպասելու, եթե ոչ պահանջելու, որ Սուրբ Գիրքն ասորերեն Պեշիտտոյից (եբրայական (Հին) Կտակարանի ասորերեն թարգմանությունը կոչվում էր Պեշիտտո, որ նշանակում է «պարզ») թարգմանվի հայերեն, ինչպես եւ կատարվեց իրականում: Այդ գործին լծվեցին գրչության արվեստին հմուտ հին հեթանոսական շրջանի դպրություններին քաջատեղյակ ասորի մասնագետներ: Խոսքը շինծու հայերեն գիր ստեղծելու մասին չէր, ինչպես ենթադրում են որոշ ժամանակակից հետազոտողներ: Քանի որ նրանք լավ գիտեին, որ Հայաստանում գրաստեղծման շարժման գլուխ էին կանգնած տարբեր լեզուների մեջ հմուտ նրանց նշանագրերին տիրապետող անձինք, ուստի չէր կարելի վարկաբեկել գրաստեղծման գաղափարը: Անտարակույս, այսպիսի հանգամանքների արդյունք պետք է համարել «դանիելյան» կոչված նշանագրերի ի հայտ գալը:

Յ. Մարկվարտը մինչեւ իսկ նշում է իրավամբ, թե հայ դպրության գործն ուղղված էր ոչ թե պարսկահռոմեական ազդեցությունների դեմ, այլ «ընդդեմ Սելեւկիայի կաթողիկոսի ոտնձգությունների. մի կաթողիկոս, որը զորավիգ ունենալով արքայից արքային՝ ձգտում էր դառնալ Երանշահրի բոլոր քրիստոնյաների, սրանց թվում նաեւ Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների, գերագույն առաջնորդը, եւ այդ պատճառով էլ իր տիտղոսի մեջ էր ներգրավել նաեւ Հայաստանը, Գուրջանը (Վրաստան) եւ Առանը (Աղվանք)» («Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, էջ 179-180):

Այնուհետեւ, ըստ Կորյունի, բազում հարցուփործից եւ քննությունից հետո Սահակն ու Մաշտոցն իրենց առաջվա փնտրածի մասին (զկանխագոյն խնդրելին) հայտնեցին իրենց Վռամշապուհ թագավորին, որն էլ նրանց պատմեց մի ոմն մարդու, ասորի ազնվական կամ ազրնական (68?) եպիսկոպոսի մասին՝ Դանիել անունով կոչվածի, որն անակնկալ մի տեղից գտել էր հայերեն լեզվի աղփաբետների նշանագրեր - «որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»: Եվ երբ արքան նրանց պատմեց Դանիելի գտածի մասին («Վասն գտելոյն ի Դանիէլէ» (Կոր. [Զ], էջ 44), նրանք հոժարեցրին արքային՝ հոգ տանել այն պիտույքի համար: Եվ Վռամշապուհն ուղարկեց Վահրիճ անունով մեկին հրովարտակներով մի երեց մարդու մոտ, որին Հաբել էին կոչում, որն ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր: Իսկ Հաբելը, այս լսելով, շտապով հասավ Դանիելի մոտ եւ նախ ինքը տեղեկացավ Դանիելից նշանագրերին, ապա նրանից առնելով՝ ուղարկեց արքային Հայոց երկիրը՝ նրա թագավորության հինգերորդ տարում. «Առաքէր առ արքային յերկիրն Հայոց: Ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր» (Կոր., [Զ], էջ 44): Իսկ արքան միաբան սրբերի՝ Սահակի եւ Մաշտոցի հետ, Հաբելից ստանալով նշանագրերը, ուրախացան:

Ապա երանելի հոգաբարձուները, առնելով հանկարծագյուտ փնտրածը («զյանկարծագիւտ խնդրելին»), արքայից խնդրեցին նաեւ մատաղ մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը տարածել («արծարծել») (Կոր., [Զ], էջ 44): «Արծարծել» Մ. Աբեղյանը թարգմանում է գործածել): Եվ երբ նրանցից շատերը տեղեկացան, ապա հրաման տրվեց ամենուրեք դրան(ց)ով կրթել, որով եւ երանելին [Մաշտոցը] հասավ նույնիսկ վարդապետության գեղեցիկ աստիճանի եւ մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ:

Բայց երբ հասկացան, որ նշանագրերը բավական չեն լրիվ արտահայտելու հայերեն լեզվի սիղոբաները - կապերը՝ «իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թե չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզուոյն (Կոր. [Զ], էջ 46), ապա Սահակն ու Մաշտոցը կրկին նույն հոգսի մեջ ընկան եւ մի առ ժամանակ դրան ելք էին փնտրում՝ «յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային եւ նմին ելս խնդրէին ժամանակս ինչ» (Նույն տեղում):

Ղ. Փարպեցին, որ հավաստիացնում է քանիցս, թե Կորյունից է քաղել գրերի գյուտի պատմությունը, հակառակ իր ասածին, բավական տարբեր է ներկայացնում իրողությունը: Երբ Մաշտոցը դիմում է Սահակ կաթողիկոսին՝ հայոց նշանագրերի հարցով, ըստ Փարպեցու, Սահակը հայտնում է նրան, թե ոչ շատ օրեր առաջ խոսք եղավ եկեղեցում այդ պիտույքի անհրաժեշտության մասին, եւ արքան [պատմեց իրեն], թե մեկը ասած է եղել նրան՝ արքային. «տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում» - «տեսա հայերեն նշանագրեր ինչ-որ եպիսկոպոսի մոտ մի գյուղում» (Փարպ., Ա. Ժ, էջ 14):

Եվ Սահակը կարծես իր դերն ու առաջնությունը շեշտելու համար կրկնում է անմի-



ջապես. «եւ թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի եւ ինձ նա պատմեաց»: Ապա սուրբ կաթողիկոս Սահակը եւ երանելի Մաշտոցը միասին մտնում են Վռամշապուհ թագավորի մոտ, եւ նա մի անգամ եւս վերհիշում է վանականի (այն է՝ Հաբելի) խոսածները՝ «զխօսեցեալսն վանականի» (նույն տեղում):

Այս բոլորը Փարպեցին ինքն է հորինել՝ ցույց տալու համար, թե Մաշտոցից առաջ Սահակ կաթողիկոսն արդեն Վռամշապուհ արքայի հետ, այն էլ եկեղեցում, ոչ թե արքունիքում, խոսք է բացել հայոց գրի անհրաժեշտության վերաբերյալ, եւ որ Վռամշապուհն առաջինը Սահակին է հայտնել Հաբել վանականի ասածը ինչ-որ եպիսկոպոսի, այն է՝ Դանիելի մոտ իր տեսած հայերեն նշանագրերի մասին: Ընդսմին Փարպեցին, չնայած, իր խոսքով, բազմիցս կարդացել է Կորյունի գրածը, մոռանում է հիշատակել հայ ոց աշխարհի եպիսկոպոսների աշխարհահոգ խորհուրդը եւ նրա ընդունած որոշումը՝ «ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել», որից հետո է միայն Վռամշապուհը պատմում Հաբելից լսածը:

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

## (≈1250 - ≈1314/1328)



Սկիզբը՝ էջ 5

Հանգի դասավորության բնագավառում առանձնանում է հանգավորման մի ձեւ, որ հետո լայն կիրառություն ունեցավ Սայաթ-Նովայի մուխամազներում: Դա այն է, երբ առաջին քառատող տան մեջ բոլոր տողերն ունեն միեւնույն հանգը, իսկ եթե հանգավորումն անկայուն է, ապա չորրորդ տողի պարտադիր հանգը նման է հաջորդ տների չորրորդ տողերի հանգի հնչեղությանը: Պատկերը կլինի այսպես՝ աաաա, բբբա, գգգա, դդդա, եեեա եւ այսպես շարունակ: Այսպես են գրված «Բան զարնան աւրինակաւ...», «Նոյն բան խորհրդով...», «Հոգի՛, աչերուս իմ լոյս», «Տաղ սիրոյ» գործերը: Իսկ ընդհանուր առմամբ նա կիրառել է միահանգ, միայն մեկ դեպքում՝ կից հանգավորում («Բանք յաղագս անցաւոր մեծութեան...»):

Երզնկացին ուժեղացրեց նաեւ հանգերի հնչյունական հագեցվածությունը, ինչը հատկապես կարեւորվում է միաձայն հնչականության համեմատությամբ, ինչի օրինակներ եւս նա ունի («Բանք յերկու դէմս մտաց տեսութիւնք...»):

Նրա սիրած տողաչափերն են 8=(4+4)՝ «Տաղ զարնան աւրինակաւ...», «Բան յաղագս անբաւելի սքանչելեացն...», «Նոյն բան խորհրդով...», «Տաղ զարնան ազնիւ է» եւ 16 =8(4+4)+8(4+4)՝ «Բանք վարդի աւրինակաւ զՔրիստոս պատմէ», «Մեկնութիւն վարդին համառաւտ», «Այս գարունս զգալուստըն Քրիստոսի», «Բան Կոստանդեայ առ մեր հոգեւոր եղբայրն Ամիր»: Այսինքն՝ նրա կիրառած հիմնական չափական միավորը 4 վանկանի անդամն է՝ իր կրկնակ կամ քառյակ բարդումներով: Կա նաեւ չափական այլ կազմություն 14=6+8(4+4), որը հանդիպում է հետեւյալ տաղերում՝ «Բանք յաղագս արեգականն արդարութեան», «Այլոց այնչափ բառձիր», «Կրկնեալ պատասխանի այսպէս ի դէմ», «Ոմանք չարախաւսեն զինէն...» եւ այլն:

Գերիշխող լինելով հանդերձ՝ այս երկու չափերն էլ ունեն տատանումներ. 16 վանկանի տողի առաջին 8 վանկանի կիսատողը դառնում է 6 վանկ, իսկ 14-ի դեպքում 6-ը՝ 8: Կան նաեւ այլ տատանումներ, բայց չափական կշռույթի հիմքում մշտապես ընկած է վանկական գերիշխող կառուցվածքային միավոր:

Հանդիպում են նաեւ հետեւյալ տողաչափերը 7=4+3 («Տաղ զարնան եւ ուրախութեան», «Հոգի՛, աչերուս իմ լոյս») 11 եւ 12 վանկանի տողեր (տատանումներով), որոնց հիմքը 5 կամ 6 վանկանի անդամն է («Բանք յաղագս անցաւոր մեծութեան...», «Բանք յաղագս չար կնոջ նախատինք...», «Տաղ սիրոյ ազնիւ»):

Պատկերավորման եւ արտահայտչական միջոցների տեսակետից Երզնկացու պոեզիան ունի յուրահատկություններ, բայց դրանք առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ.
դոկտոր, պրոֆեսոր

# ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**Մեր հյուրն է Սուրբ Հովհաննես եկեղեցու սպասավոր Տ. Դանիել քհն. ԲԱՂՈՒՄՅԱՆԸ**

***- Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին այս տարի՝ մայիսի 25-ին մեծ շուքով տոնեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձման հիշատակը: Մեր եկեղեցին մեծ շուքով է տոնում Փրկչի համբարձման տոնը, որով, ինչպես եկեղեցու հայրերն են ասում, ավարտվում է Քրիստոսի երկրային տնօրինությունների շրջանը:***

**Տե՛ր հայր, ինչո՞ւ համբարձվեց Քրիստոս:**

- Մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձումը մեզ համար մեծագույն հրաշք եւ տոն է: Քրիստոսի համբարձումը շարունակությունն է Նրա հարության: Համբարձմամբ ավարտվեց Քրիստոսի երկրավոր կյանքը: Ձիթենյաց լեռան վրա Իր շուրջը հավաքեց սիրելի առաքյալներին, Նա Իր վերջին պատգամները տվեց նրանց, ոգեւորեց, հուսադրեց, պատգամեց քարոզել Ավետարանը ողջ աշխարհում՝ «Գնացեք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ 19): Քրիստոս համբարձվեց, որպեսզի ուղարկի Մխիթարիչին, այսինքն՝ Սուրբ Հոգուն, որպեսզի աշակերտները, լցվելով Սուրբ Հոգով, գնային քարոզելու Ավետարանը համայն աշխարհին, եւ բոլոր ազգերը ճանաչեին Աստծուն, գտնեին աստվածային խաղաղությունը եւ արժանանային հավիտենական կյանքին:

**- Գիտենք, որ հարուցյալ Քրիստոս այդ 40 օրերի ընթացքում բազմիցս երեւում էր վշտից հուսահատված Իր աշակերտներին: Ինչո՞ւ Քրիստոս հարությունից հետո անմիջապես երկինք չվերացավ, այլ 40-րդ օրը միայն համբարձվեց:**

- Ընդհանրապես կյանքում որեւէ բանի հասնելու համար նախապատրաստական մի շրջան ենք անցնում: Օրինակ՝ Հայոց բանակում զինվորական երդմանը նախորդում է նախապատրաստական շրջանը: Նմանապես եւ հոգեւորականներն օծվելուց հետո 40-օրյա նախապատրաստական շրջան են անցնում, որից հետո միայն սպասավորում են ժողովրդին: Քրիստոսն էլ, որպես ճշմարիտ Հովիվ, առաջնորդ այդ 40 օրերի ընթացքում, չդադարեց քարոզելուց, պատրաստեց Իր աշակերտներին, քանի որ Քրիստոսի խոսքը դեռեւս ամբողջապես հաստատված չէր նրանց սրտերում: «Հովվին պիտի հարվածեմ, եւ հոտի ոչխարները պիտի ցրվեն» (Մատթ. ԻԶ 31),- ասում է Սբ Գիրքը: Հովիվը Քրիստոսն է: Երբ Նա դատապարտվեց խաչի մահվան, աշակերտները սարսափահար վիճակում էին գտնվում, վախեցած եւ տագնապած էին: Շուրջ 3 տարի Նա նրանց հետ էր, հրաշքներ էր գործում, ուսուցանում... Եվ հանկարծ... Նրանց կողքին էին զայրացած հրեաները, ովքեր փնտրում էին նրանց՝ բզկտելու, դատապարտելու եւ խաչելու համար, ինչպես նրանց Ուսուցչին: Եվ երբ յուղաբեր կանայք բերին Տիրոջ հարության ավետիսը, հիշենք, թե ինչպես Պետրոս առաքյալը վազեց գերեզման՝ իր աչքերով տեսնելու եւ համոզվելու Տիրոջ հարության իսկության մեջ: Հարությունը ներշնչում եղավ առաքյալների համար, նրանք ուրախացան, ցնծացին, Տերը գոտեպնդեց նրանց: Իր հրաշափառ հարությունից հետո, երբ Հիսուսը հայտնվեց Վերնատանը հավաքված Իր աշակերտներին, մի շատ կարեւոր բան ասաց. «Խաղաղությո՜ւն ձեզ»: Կարծում եմ՝ ոչ մի քրիստոնյա չի կարող հասնել փրկության, եթե այդ աստվածային խաղաղությունը չունենա իր հոգում: Քրիստոսն Իր խաղաղությամբ հանդարտեցրեց առաքյալների հոգու խռովքն ու անհանգստությունը, որպեսզի իրենք էլ կարողանային սերմանել մարդկանց սրտերում այդ աստվածային խաղաղությունը, քանի որ ով չունի այդ խաղաղությունը, չի կարող ուրիշին փոխանցել այն: Չմոռանանք նաեւ, որ այդ խաղաղությամբ է պայմանավորված նաեւ մեր օջախների կայունությունը:

**- Տե՛ր հայր, Քրիստոսի համբարձումը Աստծո եւ մարդու միջեւ հարաբերությունների խզո՞ւմ էր, թե՞ այն եզրափակումն էր Քրիստոսի միայն երկրային առաքելության:**

- Քրիստոսի համբարձմամբ ոչ միայն չխզվեց Աստծո եւ մարդկանց միջեւ հարաբերությունը, այլեւ կապն ավելի հաստատվեց, քանի որ համբարձումից հետո առաքյալները ցրվեցին աշխարհով մեկ՝ Ավետարանի խոսքը քարոզելու: Համբարձմամբ սկիզբ դրվեց առաքելական քարոզչության: Քրիստոսի համբարձմամբ մեզ փրկության հույսը տրվեց, որով ապրում ենք, այլեւ՝ մկրտվելով Հոր, Որդու եւ Սբ Հոգու անունով՝ հավիտենական կյանք ենք ունենում:

**- Համբարձման դրվագում նկարագրվում է, որ Հիսուսն աշակերտներին Ձիթենյաց լեռան գագաթը բարձրացրեց: Լեռան հանգամանքն ամենակարեւոր դեպքերի պարագայում հաճախ է հիշվում ինչպես Հին, այնպես էլ՝ Նոր Կտակարաններում: Ինչո՞ւ է այդքան կարեւորվում լեռան հանգամանքը:**

- Լեռը բարձրանալու խորհուրդը հոգով կտրվելն է մեղքերից, մեր առօրյա կյանքից: Այո՛ նաեւ վերինը խորհելն է նշանակում: Օրինակ՝ աղոթելիս մարդը միշտ վեր է նայում, այսինքն՝ ձգտում է վեր, քանի որ գիտի, որ Տերը երկնքում է, եւ երկրորդ գալուստն էլ երկնքից է լինելու: Ահա այս խորհրդով է նաեւ, որ մեր պապերը վանքերը բարձր վայրերում են կառուցել: Մարդը հողից է ստեղծվել, ուստի հող էլ պիտի դառնա, այդ պատճառով էլ մեր մարմինը կապված է նյութին: Սակայն երբ կտրվում ենք հողից, հոգով բարձրանում ենք վեր, դեպի երկնայինը, դեպի Աստված:

**- Համբարձման տոնը ժողովրդին հայտնի է նաեւ «վիճակ» կամ «Ջան գյուլում» անվանումներով: Ինչո՞ւ է վիճակ գցելու ավանդությունը զուգորդված Համբարձման տոնի հետ:**

- Քրիստոսի համբարձումից հետո առաքյալները վիճակ գցեցին 2 արժանավորների՝ Բարսաբայի եւ Մատաթիայի միջեւ, որպեսզի Հուդայի փոխարեն նրանցից մեկը համալրեր 12 առաքյալների շարքը: Եվ վիճակահանությամբ 12-րդ առաքյալի կոչմանն արժանի դարձավ Մատաթիան (տե՛ս Գործք Ա 15-26): Համբարձումը շատ սիրված եւ մեծ ժողովրդականություն վայելող տոն է: Տոնի օրը կազմակերպվում են բազմաթիվ ուխտագնացություններ: Համբարձման նախընթաց օրն աղջիկները յոթ աղբյուրից կժերով ջուր էին բերում: Ջրով լի կժերի մեջ դնում էին իրենց սիրած իրերը, ծաղիկները շաղ տալիս վրան, շուրջը պտտվելով երգում էին, իսկ փոքրիկ աղջնակը հանում էր մի որեւէ իր: Տոնը կոչվում է նաեւ «Ջան գյուլում», որովհետեւ վիճակի համար երգվող խուսքերը վերջանում են «Ջան գյուլում» բառերով: Մեր եկեղեցու հայրերը շատ գեղեցիկ կերպով են համադրել ժողովրդական սովորույթները քրիստոնեական տոների հետ, ուստի դրանցում խոտելի բան չկա:

**- Գիտենք, որ ամեն տարի՝ Համբարձման տոնին, Հայ Առաքելական եկեղեցիներում հիշատակվում է Հայոց Հայրապետական Աթոռը Սսից Սբ Էջմիածին փոխադրելու պատմական դեպքը: Ինչո՞ւ է հենց Համբարձման տոնին հիշատակվում պատմական այս դեպքը:**

- Հայ ժողովուրդը մշտապես եղել է թշնամիների իշխանության ներքո: Նման պայմաններում վտանգվել է նաեւ Հայոց Հայրապետական Աթոռը: Հայրապետական գահը բազմիցս տեղափոխելու անհրաժեշտություն է եղել: 14-րդ դարի սկզբին ծնվում է Հայրապետական Աթոռը Կիլիկիայից Սբ Էջմիածին փոխադրելու գաղափարը, որը հիմնավորվում է հատկապես Կիլիկյան թագավորության անկմամբ (1375 թ.): Ի վերջո 1441 թ.՝ Համբարձման տոնին, Սբ Էջմիածնում գումարվում է ազգային-եկեղեցական ժողով, եւ հայրապետական գահը Սսից տեղափոխվում է աստվածահաստատ վայրը՝ Սբ Էջմիածին:

*Հյուրընկալեց*
*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*




# ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

*Սկիզբը՝ էջ 4*

Բանաստեղծին, քաղաքացի գիտնականին զայրացնող երեւույթներից մեկն էլ խորհրդային պատմագրության բացահայտ կեղծարարությունն էր եւ հայ ժողովրդի պատմության նենգափոխումն ու աղավաղումը հայրենի եւ օտար պատմաբանների կողմից: Հիմա նոր-նոր խոստովանում են, թե խորհրդային ժամանակներում գրված հայ ժողովրդի պատմությունը 70-80 %-ով պետք է վերափոխվի, որ լիարժեք ասվի ճշմարտությունը: Այս առումով ժամանակին սկզբունքային նշանակություն ունեցան Պ. Սեւակի ելույթները՝ ուղղված զորավար Անդրանիկին եւ առհասարակ հայ ազատագրական պայքարի գնահատմանը, ինչպես նաեւ ոխերիմ հարեւան ազերի պատմաբանների զեղծարարությունների մերկացմանը: Նաեւ իր մասին էր ասում բանաստեղծություններից մեկում.

*Վախ են ներշնչում պետություններին*
*Միչեւ իսկ իրենց կամքին հակառակ:*
*Արքաների հետ խոսում են «դու»-ով,*
*Եթե, իհարկե, լսում են նրանց:*

Պ. Սեւակը թարգմանվել էր Խորհրդային Միության ու աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով, արժանացել միջազգային ճանաչման: Վերջին շրջանում, մանավանդ «Եղիցի լույս» գրքի արգելումից հետո ապրում էր մարդկային ծանր դրամա, հոգեկան խոր ճգնաժամ, այնքան, որ 1971 թ. հունիսի 3-ին՝ մահից ընդամենը 14 օր առաջ, հրաժարվեց ԽՍՀՄ գրողների միության 5-րդ համագումարի պատգամավոր լինելուց՝ պատճառաբանելով, թե «մինչ այդ ես ֆիզիկապես գոյություն չեմ ունենա»: Կյանքից անժամանակ հեռանալը՝ նրա ըմբռնումով՝ դարձել էր այնքան անխուսափելի, որ բնական մահը պիտի շեղում լիներ օրինաչափությունից:

Մեծ բանաստեղծները նաեւ մեծ պայծառատեսներ են, ունենում են գալիքի զարմանալի, հաճախ մռայլ կանխազգացում: Այդպիսի գալիքնատես ու կանխասաց բանաստեղծներ էին Սիամանթոն ու Չարենցը, այդպիսին էր գրական ազգակցությամբ նրանց հաջորդող Պ. Սեւակը: Նա թողեց շատ բան՝ բանաստեղծական ու գիտական մեծ ժառանգություն, բայց շատ բան էլ տարավ իր հետ. անավարտ թողեց «Սայաթ-Նովան եւ հայ միջնադարը» ուսումնասիրությունը, Նարեկացու «Մատյանի» ի՛ր թարգմանությունը գրաբարից, երազում էր ստեղծել մեր ժողովրդական «Սասնա Ծռեր» էպոսի՝ իր գեղարվեստական մշակումը...

Այսքանի մասին գոնե արտահայտվել էր: Մնացածը՝ չգիտենք:

Դեռ 1960 թ. գրում էր.

*Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է:*
*Ա՜խ, երանի՜ թե ես այնպես մեռնեմ,*
*Որ դու ... ինձ սգաս:*

Տասնյակ անգամներ նա իր ստեղծագործություններում խոսում է կանխահաս անբնական մահվան մասին, իսկ բնական մահը հնարավոր էր համարում միայն արդարության միամտաբար հավատալու դեպքում.

*Միամիտ եմ դառնում նորից,*
*Հավատում եմ արդարության,*
*Ու թվում է, թե ես պիտի*
*Իմ բնական մահո՜վ մեռնեմ...*

Նրա կյանքն ընդհատվեց 47 տարեկան հասակում՝ ստեղծագործական ուժերի բուռն ծաղկման շրջանում՝ 1971 թ. հունիսի 17-ին տեղի ունեցած առեղծվածային ու խորհրդավոր ավտոարկածի հետեւանքով: Բուն ճշմարտությունը հենց սկզբից կանխվեց ու թաքցվեց, ամեն ինչ վերագրվեց նրա վարորդական անփորձությանը: Ցավոք, այդպես գրեցին նաեւ նրա ընկերները (Լեւոն Հախվերդյան եւ ուրիշներ), որոնց հավաստիացումները ներկայացվեցին որպես անհերքելի ճշմարտություններ, մինչդեռ կանխամտածված վթարային դրություն



*Գործ՝ Ս. Մուրադյանի*

ստեղծելու եւ սպանություն կազմակերպելու առթիվ հարուցված քրեական գործը մի քանի անգամ կարճվել է Մոսկվայի հրամանով: Այսօր վերացված են բոլոր փաստաթղթային հիմքերը, եւ մնացել են միայն ժամանակակիցների հիշողություններն ու իրար հակասող ենթադրությունները:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

## ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ԳԵՐԳԵՍԱՑԻ ԴԻՎԱՀԱՐՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

## (Մատթ. 8, 28 - 9,1)

### Խոսված 1981 թ. հուլիսի 19-ին



«Հեռացի՛ր, հեռացի՛ր մեզանից, հեռացի՛ր մեր սահմաններից»,- ասում էր ժողովուրդը, որը նախընտրեց այն, ինչ թանկ էր իր համար՝ հարստությունը, անասունների հոտերը, կյանքի հանգստավետությունը՝ դրանք գերադասելով մարդու առողջությունից, բժշկությունից:

Հեռացի՛ր, Դու մեզանից խլում ես այն, ինչ թանկ է մարդուց... Հեռացի՛ր մեզանից, ասում էր Մեծ Ինկվիզիտորը, Դու մեզ խանգարում ես կառուցել երկրային բարին, խանգարում ես երջանկությամբ ապահովել անբան, անպատասխանատու հոտը: Հեռացի՛ր, Դու նրանց համար բացում ես ճանապարհներ, որոնցով շատ դժվար կլինի քայլել... «Հեռացի՛ր մեզանից,- Պիղատոսի առաջ ասում էին հրեա ժողովրդի առաջնորդները,- իսկ եթե Ինքդ չես հեռանում, թող երկրային բիրտ ուժն ազատի մեզ Քեզանից...»: Եվ Պիղատոսին դիմեցին հետեւյալ խոսքով. «Խաչի՛ր, խաչի՛ր Նրան», որպեսզի մեր փողոցներում այլեւս չհնչի այդ սարսափելի քարոզը բացարձա՛կ՝ խաչի՛ սիրո մասին, այդ անմտությունը հեզության ու խոնարհության, ինքնուրացման, ամեն ինչ նվիրաբերող սիրո մասին, որովհետեւ չկա ավելի թանկ ոչինչ, քան մարդը...

Եվ ամբողջ պատմության միջով հնչում է այդ աղաղակը՝ հեռացի՛ր: Դու կանգնել ես դեպի բարեկեցություն, անհոգություն, մոռացություն տանող մեր ճանապարհին... Սա ասում է մարդկային ցեղն իր ողջ պատմության ընթացքում: Իսկ մե՞նք: Մի՞թե մենք ենք միակը, մի փոքր բուռ աշակերտների հետ, որ այդ սարսափելի բառը, ուղղակի կամ անուղղակի, երբեք չենք ասում եւ երբեք չենք ասել: Հիշենք ոչխարների եւ այծերի մասին Քրիստոսի առակը. արդյոք մեզ մոտ չի՞ եկել մի կարիքավոր մարդ, եւ արդյոք նրան չե՞նք ասել՝ հեռացի՛ր: Մարդը հագնելու ոչինչ չուներ, բայց մենք նրան պատասխանեցինք՝ հեռացի՛ր... Ճանապարհին մեզ չի՞ մոտեցել մի աղքատ, եւ մենք, գնված սնունդը պահելով մեր պայուսակում, չե՞նք պատասխանել նրան. «Ամբողջ գումարս ծախսել եմ, քեզ ոչինչ տալ չեմ կարող...»: Պայուսակից ոչինչ չհանեցինք, դրամապանակից ոչինչ չտվեցինք, ասացինք՝ հեռացի՛ր... Եվ կամ պարզապես, ինչը գուցե ավելի սարսափելի է, դիտմամբ չտեսանք նրան, կողքով անցանք, հայացքով սահեցինք, այնպես, որ նա հասկացավ, որ մենք տեսել ենք նրան, բայց որ ինքը գոյություն չունի մեզ համար. գոյությունից դեպի անգոյություն քշեցինք նրան... Պատահում է, որ նաեւ գողը, հանցագործն է մեր դուռը թակում. «Ես հենց նոր եմ բանտից դուրս եկել. ինձ մի փոքր գումար է պետք, ես հագնվելու կարիք ունեմ, որ աշխատանք գտնեմ...»: Եվ քանի՛ անգամ է այսպիսի մարդը լսել թվացյալ հավատացյալից. «Քեզպեսների հետ ես չեմ շփվում. հեռացի՛ր»... Քանի՛ անգամ է պատահել, որ պետք էր այցելել մի հիվանդի՝ հիվանդանոցում, բայց ո՛չ, այնտեղ հնարավոր է վարակվել, ավելի լավ է չգնալ այնտեղ: Թող նա իր ճանապարհով գնա, իսկ իմ ճանապարհից հեռանա...

Այսպես պատահեց նաեւ ժամանակին՝ մի դեկտեմբերյան գիշեր, երբ տարեց մարդը, ով իր հետ ուներ երիտասարդ հղի Մորը, թակեց Բեթղեհեմի բոլոր դռները, բայց ոչ մի դուռ չբացվեց. մեզ մոտ լուռ է, մեզ մոտ տաք է, մենք հավաքված ենք ընտանիքով, եւ օտարը մեզ պետք չէ. ուրի՛շ օթեւան փնտրիր, գնա այն քարանձավը՝ այն փարախը, ուր աղքատներն իրենց եզն ու էշն են պահում, հեռացի՛ր մեզանից...

Որքա՞ն է պատահել մեզանից յուրաքանչյուրի՝ իմ եւ ձեր, կյանքում, որ վշտահար մեկը եկել է մեզ մոտ, երբ մեր հոգում գարուն է եղել, եւ նրան ասել ենք. «Հեռացի՛ր, մեր ուրախությունը մի՛ թունավորիր. մեր տանը հարսանիք է, մեր տանը ծնունդ է նշվում, մեր տանը խնջույք է, այդ ուրախությունը մի՛ պղտորիր. այն այնքա՞ն քիչ է պատահում»... Լինում էլ է, որ մարդը գալիս է վշտո՛վ համակված տուն, եւ նրան ասում են. «Հեռացի՛ր. մեզ մոտ մութ է, եւ մեր ցավերը՝ շատ, դրանք մի՛ ավելացրու, բաժակը լցված է, շուրթերից թափվում է. հեռացի՛ր մեզանից»...

Այսպես կարելի է անվերջ օրինակներ բերել ոչ թե ուրիշի կյանքից, այլ սեփական՝ ի՛մ, ձե՛ր... Եվ այդպես վարվել ենք Քրիստոսի՛ հետ. մի՞թե Փրկիչը չասաց մեզ. «Ինչ որ այս փոքրերից մեկին արեցիք, Ինձ արեցիք»: Նշանակում է՝ մենք Նրա՞ն ենք ասել՝ հեռացի՛ր. Դու մեզ զրկում ես նրանից, ինչն ավելի թանկ է մեզ համար, քան Քո եւ նրանց ներկայությունը, ում Դու այնքա՞ն սիրեցիր, որ նրանց համար Քո կյանքը տվեցիր, Քո սարսափելի գիշերը Գեթսեմանիում, Քո՝ մարմնով խաչելությունը, խաչի վրա Աստծուց լքվելը. այդ ամենը ոչ մի նշանակություն չունի ինձ համար. Դու ես նրանց այդպես սիրում, ո՛չ ես...

Մե՞նք չէ՛, որ ասել ենք. «Խաչի՛ր, խաչի՛ր Նրան», բայց որ մեկը սովից մեռնում է, երբ միայնությունից տառապում է, երբ լքված է, երբ մարդկանց մեջ նրա համար տեղ չկա, ինչպես որ Քրիստոսի համար տեղ չեղավ գոնե Երուսաղեմ քաղաքում մեռնելու, մի՞թե այս ամենը խաչին գամվածություն չէ, խաչելություն չէ, լքվածության մահ չէ՝ դանդաղ, հաճախ դա՛ռը մահ, երբ մարմնից առաջ մեռնում է մարդու եւ Աստծո հանդեպ հավատը, մեռնում ու մարում է հույսը, աղոտանում ու մեռնում է սերը...

Ահա՛ թե ինչի մասին է պատմում մեզ համար այնքան սովորական դարձած այս առակը: Այդ ամբողջ պատմությունը հանգում է նրան, ինչն ասվեց Քրիստոսին այն պահին, երբ Նա Իր կարեկցանքը, գթասրտությունը, սերը եւ աստվածային զորությունը ցույց տվեց: Հեռացի՛ր, Դու մեզանից խլում ես երկրայինը. երկնայինը մեզ պետք չէ՛...

Հիշե՛նք Փրկչի խոսքը եւ սթափվե՛նք. «Նախ փնտրեք Աստծո արքայությունը, եւ ամեն ինչ կավելանա ձեզ համար»: Այո՛, հենց կավելանա՛. ոչ թե կխլվի, այլ կգտնի իր տեղն այնտեղ, ուր երկինքն է երկրի վրա, եւ այդ ժամ լիություն կլինի: Ամեն:

*Թարգմանությունը՝*
*Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ*

---

# «ԶԻՆՈՒ ԿԱՐԱՆ՝ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ, ՄԵՁ ՀԵՐԻՔ Է ՔՈ ՄԻ ԹԱՌԸ»...

*Սկիզբը՝ էջ 4*

Սրանից հետո 1-ին ջութակն իր մենանվագով կլարնետին «վերադարձնում» է եղեմ, եւ սկսվում է «հրեշտակային երկխոսությունը»: Ի տարբերություն այս զուգանվագի՝ Մենուետի 1-ին տրիոյում հնչող կանոնը, որը շարադրում են 1-ին ջութակը եւ ալտը, փոքր-ինչ մռայլ է, երկրային: Երկրային է եւ կլարնետի նվագաբաժինը 2-րդ տրիոյում, ուր կլարնետը նմանակում է ժողովրդական նվագարանին: Սա Աբերտը բնորոշում է որպես ժողովրդական բնույթի «հանճարեղագույն ոճավորում»: Նույնը կարելի է ասել մանկական երգին նմանակող թեմայի եւ նրա վարիացիաների վերաբերյալ, որ հնչում են 4-րդ մասի վերջում ու ամփոփվում բուռն պարեղանակով: Այսպես զվարթ ավարտվում է կվինտետը:

Գեորգի Չիչերինը Մոցարտի երաժշտությունից ստացած տպավորությունն արտահայտել է Շարլ Բոդլերի հետեւյալ խոսքերով («Շատրվան» բանաստեղծությունից).

*Ահա շիթը ծիածանվեց՝*
*Ջրի սյունը թրթռուն*
*Վեր խոյացավ ու կանգնեց,*
*Արեւի մեջ թաթախվեց*
*Ու հետ թափվեց լալագին՝*
*Կաթիլ-կաթիլ խաղաղվեց:*

Հիրավի, եթե մի հրաշքով այս շատրվանի կաթիլները վերածվեին հնչյունների, ապա նմանություն կունենային կվինտետի հետ: Կլարնետի հնչյունային դրասանգները մե՛րթ վեր են խոյանում, մե՛րթ՝ գահավիժում ու խոնարհվում: Այսպես էր նվագում Ռաֆայել Բաղդասարյանը: Կլարնետի հնչյունները ոսկեզօծվում էին Էդուարդ Թադեւոսյանի ջութակի շողարձակումով ու պարուրվում Սուրեն Հախնազարյանի նրբագեղ ժանյակներով: Եվ



այս ամենն Ալեքսանդր Կոսեմյանի առնական ալտի հունով փոխանցվում ու խարսխվում էր Արամ Թալալյանի թավջութակի հաստատուն վեմի վրա: Պրոտեւսի պես՝ Մոցարտն էլ օժտված է կերպարանափոխվելու մեծ կարողությամբ: Նրա երաժշտությունը հարափոփոխ տրամադրությունների մի գեղադիտակ է, որում, ինչպես ասվեց, հաճախ քողարկվում են տիեզերական ողբի ներխուժումները:

Մինչդեռ Միրզոյանի կվարտետում ողբերգականությունը ցայտում է, այսպես ասած, «բաց տեքստով»:

Կվարտետում բախվում են երկու ուժեր:

Մեկն ազատագրվելու, իդեալին հասնելու անհաղթահարելի մղումն է, մյուսը՝ այդ մղումին խոչընդոտող չարը: Կվարտետը բաղկացած է թեմայից, հինգ վարիացիաներից եւ վերջաբանից: Պոռթկումնալից թեման արդեն իսկ խիստ լարված է, տագնապալից: Մյուս ձայների ընդերքից ժայթքող թեման շարադրում է 1-ին ջութակը, որից բռնկվում են եւ մյուս ձայները: Մեղեդին «մասիսաձեւ» է: Այն սկսվում է հիմնահնչյունից, ալիքվում մինչեւ գագաթնակետը ու կրկին վերադառնում «ի շրջանս յուր»...

Եվ թեմայի ներուժը, պայքարի անհրաժեշտությունը կյանքի է կոչում հետագա վարիացիաները:

1-ին վարիացիայում շարունակում է իշխել տագնապը: Սակայն թեմայի «բռունցյան», քառսային շարժման հակառակ՝ այստեղ ռիթմը որոշակի է, ասես մշուշը ցրվում է, եւ հակառակորդն արդեն մոտ է, ու հստակ երեւում է նրա դեմքը:

2-րդ վարիացիայում ծավալվող 1-ին ջութակի եւ թավջութակի զուգանվագն իր երազային բնույթով ու ճախրանքով մարմնավորում է այն իդեալը, հանուն որի տեղի է ունենում պայքարը:

3-րդ վարիացիայում պայքարն առավել թեժանում է: Այս վարիացիան բնորոշում են որպես սկերցո, տոկատա՝ նկատի ունենալով սրընթաց, «մոտորային» շարժումը:

Այն մենք կբնութագրենք որպես «մահվան պար»: Կոմիտասցիների պատկերավոր նվագը, աղեղների «մտրակումը» լարերին հիշեցնում էին ծիերին մտրակող հրոսակախմբերի, որոնք դարեր շարունակ ասպատակել են «երկիր դրախտավայր» Հայաստանը: Այս կերպարը համահունչ է բանաստեղծի հայտնի տողերին. «Աթիլլա՛, ոտնակոխ արա դրանց դրախտը»...

4-րդ վարիացիայում ընդլայնվում է 2-րդում հառնած պոետիկ ոլորտը: Այստեղ թավջութակի «կոմիտասյան դեցիմայի» երկնչյուն «անլռելի զանգերի» մշուշի միջից, կարծես երկնքից, լսվում է «Անտունի» երգի անմահ մեղեդին: Այն մեղմորեն ու գորովանքով նվագում էր, ավելի ստույգ՝ ավետում էր 1-ին ջութակը: Սակայն ալտի ցավագին ներխուժումները հիշեցնում էին, որ հայի սիրտը դեռ նման է «էն փլած տներին»...

Մահվան պարը շարունակվում է ու մոլեգնում նաեւ 5-րդ վարիացիայում, բայց այլակերպված, այսինքն՝ ժողովրդական պարի ձեւախեղված մի տնազով:

Չարի այսպիսի ծամածռությունների ցնցող օրինակներ հանդիպում ենք Արամ Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիայի 2-րդ մասում, Շոստակովիչի, Պրոկոֆեւի եւ այլոց արվեստում:

Միրզոյանի Կվարտետի վերջաբանում, ինչպես հաճախ լինում է վարիացիոն կառույցներում, բազում կերպարանափոխումներից հետո թեման կրկին վերադառնում է: Խիստ ազդեցիկ է թեմայի հատվածի վեր խոյացող երկու ալիքը՝ առաջինը ամբողջ Կվարտետի դիսոնանսային, «պղտոր» շարադրանքն է, երկրորդը՝ թեմայի նույն բեկորի պարզ, միաձայն (ունիսոն եւ օկտավա) անցկացումը՝ չորս երաժիշտների միահամուռ կատարմամբ, որով եւ ավարտվում է այս Կվարտետը:

*Տարաձայնություն* եւ *միաձայնություն* այս վերջին հակադրումը հաստատեց այն, որ ժողովրդի ազատագրումը միայն նրա հավաքական ուժի եւ միաբանության մեջ է: Սա է բռնատիրության տարիներին (1947-ին) ստեղծած՝ Միրզոյանի Կվարտետի վերջին եզրակացությունը:

Ի դեպ, համերգին ներկա էր Էդվարդ Միրզոյանը: Բուռն ծափերի ներքո նա բեմ ելավ եւ իր հիացմունքն ու երախտագիտությունը հայտնեց երաժիշտներին եւ ունկնդիրներին...

Ամփոփելով՝ ասենք հետեւյալը: Եթե մի պահ վերանանք ժամանակներից եւ ոճերից եւ հաշվի առնենք միայն բնույթը, ապա համերգում ներկայացված երեք երկերը կարելի է դիտել որպես մեկ «մակրոստեղծագործության» երեք մասեր: Մոցարտի Դիվերտիսմենտը, ինչպես մի տեսիլ, եկավ ու անցավ: Կարծես զրկվեցինք դրախտից: Որից հետո ներխուժեց Միրզոյանի ողբերգական Կվարտետը: Եվ ի վերջո, Կլարնետային կվինտետը կրկին վերադարձրեց մեզ «կորսված դրախտը»:

*Դանիել Երաժիշտ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ

**հեռախոս՝**
**(0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 2. 6. 2006 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**